



7-8(330-331)
21.03.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիտնապետությունն եւ գիտնաբան, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՁԵՐ ԵՐԱՉՆԵՐԸ ՏԱԴԿԵՆ ՉԱՐՆԱՆ ՎԱՐԴԻ ՊԵՍ



Թերևս չկա որևէ վիճակագրություն, թե հանրային կյանքի որ բնագավառում են առավել մեծածավալ նշում Կանանց տոնը: Տրամաբանությունը հուշում է, որ այնտեղ, որտեղ կանայք մեծամասնություն են կազմում, զարման տոներին նվիրված շնորհավորանքներն ավելի շատ են հնչում: Այս առումով կրթական ոլորտը գուցե կարելի է առաջատար համարել, որովհետև մեր դպրոցներում մեծամասամբ կանայք են աշխատում:

Առհասարակ, մանկավարժության բնագավառի աշխատողները միշտ էլ գտնվել են հանրության ուշադրության կենտրոնում: Երևի նկատի է առնվել այն հանգամանքը, որ ուսուցչի նվիրումը ապագայամետ սլաք ունի՝ երկրի համար կրթում ու դաստիարակում է արժանի քաղաքացիներ: Եվ պատահական չէ, որ անգամ դպրոցն ավարտելուց հետո, տարիներ անց, մենք աշակերտի նույն անպաճույճ սիրով ենք վերաբերվում մեր ուսուցչուհիներին, քանզի ամեն անգամ հանդիպելիս՝ նրանց ազնիվ աչքերում տեսնում ենք մեր մանկության չարածի դեմքը: Բայց, խոստովանենք, արդյո՞ք բոլորս ենք նախկին ուսուցչուհիներին, զոնե տոնական առիթներով, մեր խորին պատկառանքը ընծայաբերում...

Մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածը, որը հաճախ անվանում ենք Կանանց տոնի միամսյակ, հարմար առիթ է կրկին ակնածանքի խոսքեր ասելու նրանց, ովքեր այսօր էլ դարձյալ շարունակում են կատարել մանկավարժի իրենց դժվարին գործը, նաև նրանց, ովքեր արդեն վաստակած հանգստի են անցել: Նկատենք, մանկավարժը թռչակի գնում է, բայց ուսուցչին իր նախկին սաների համար միշտ էլ մնում է շարքում՝ ուսուցանողի ու դաստիարակողի իր անփոփոխ առաքելությամբ:

Դպրոցականներն, անշուշտ, ամենօրյա հնարավորություն ունենում են Գարնան տոնների կապակցությամբ շնորհավորելու իրենց ուսուցչուհիներին: Շնորհավորում են մեկը ծաղկեփնջով, մյուսը՝ ջերմ խոսքով, երրորդը՝ բարձր առաջադիմությամբ և այլն: Իսկ ասիա նախկին սաներս, որոնց շատերի մազերին տարիքը վաղուց ճերմակ է հյուսել, կարծես թե մոռանում ենք այդ մասին: Թե՞ չենք մոռացել... Սա պարզապես բարեճակատակ հիշեցում է բազմազբաղներին՝ ժամանակ գտնել այցելելու կամ զանգելու սիրելի ուսուցչուհուն:

Նաև բոլորիս համար լավագույն առիթ է զարմանատուն տրամադրությամբ շնորհավորելու մեր մայրիկներին ու տատիկներին, քույրիկներին ու դուստրերին, մեր հին ու նոր ընկերուհիներին:

- Արև ու ժպիտ՝ ձեր լուսե դեմքին, և թող ձեր երազները ծաղկեն զարման վարդի պես...

«ԼՍԱՐԱՐ»

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ԴՐԱԿԱՆ ՏԵՐԱՇԱՐԺ

Մարտի 18-ին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ալավա Ասրյանը մամուլի ասուլիս տվեց լրագրողներին՝ ամփոփ հաշվետվությամբ ներկայացնելով նախարարության 2012թ. կատարած աշխատանքները:

Կրթության՝ որպես գերակա ոլորտի, որն ապահովում է նախադպրոցականից մինչև հետբուհական մասնագիտական կրթություն ներդաշնակ գործունեությունը, հիմնախնդիրն է ուսման որակի և արդյունավետության բարձրացումը: Ամբողջ համակարգում ընթանում են բարեփոխումներ, առանցքայինը՝ հանրակրթության ոլորտում, որի արդյունավետ աշխատանքից կախված է կրթական մյուս աստիճանների փոխկապակցված ու արդյունավետ գործունեությունը:

2012 թվականը նշանակալից էր 12-ամյա կրթության առաջին շրջանավարտների թողարկմամբ: Վերլուծությունը ցույց է տվել, որ ճիշտ քաղաքականություն է ընտրված, մասնավորապես ավագ դպրոցները կարողացել են լուծել այն խնդիրները, որոնք միտված են ուսման որակի բարձրացմանը: Այդ կապակցությամբ Ա. Ասրյանը բերեց հետևյալ փաստը. ԱրՊՀ և ՀՀ բուհեր ընդունվածների 63%-ը ավագ և հոսքային դպրոցների շրջանավարտներ էին: Ավագ դպրոցներում ընդգրկված է 10-12-րդ դասարանների սովորողների 39,5 տոկոսը: Նախարարի խոսքով՝ այստեղ ամեն ինչ չէ հարթ, անելիքներ դեռ կան:

Նախարարն այնուհետև անդրադարձավ ոլորտի բովանդակային բարեփոխումներին մեծապես խթանող դպրոցների շենքային պայմաններին ու նյութատեխնիկական հագեցվածությանը՝ ասելով, որ լայնածավալ աշխատանքներ են իրականացվել 2012թ.: Շահագործման են հանձնվել Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի՝ ժամանակակից պահանջներին համապատասխան վերակառուցված և նոր գույքով ապահովված ուսումնական, Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղի մանկապարտեզի, Քաշաթաղի շրջանի Արտաշավի միջնակարգ դպրոցի շենքերը, Շալուայի մարզադահլիճը, Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի շենքը: 2013-ին կշարունակվեն աշխատանքները 33 կրթօջախներում:

Որոշակի աշխատանքներ են տարվել նյութատեխնիկական բազայի հագեցման, առանձնապես տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Համակարգչային կաբինետներ են կահավորվել հանրակրթական 7 դպրոցներում: ՀՀ-ում գործող մի

շարք տեղեկատվական տեխնոլոգիաների գծով կազմակերպությունների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ նրանց աջակցությամբ Արցախի դպրոցականների հետ որոշակի աշխատանքներ տանել այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են «Դիջիթեթ»-ը և ռոբոտատեխնիկայի ուսումնասիրման աշխատանքները: Բացի այդ, «Սինոպսիս Արմենիա» ընկերության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, և արդեն 2013թ. սեպտեմբերի 1-ից այնտեղ կգործի հատուկ ամբիոն, որտեղ կպատրաստվեն կապի և հեռահաղորդակցության ոլորտի մասնագետներ: 2012թ. նյութական ապահովվածության առումով կատարվել են շուրջ 143,7 մլն դրամի ծախսեր՝ սովորողներին անվճար դասագրքերով, մեթոդական ու գեղարվեստական գրականությամբ ապահովելու ուղղությամբ:

Լուրջ ուշադրություն է դարձվել մասնագետների վերապատրաստմանը: Համաձայն գործող օրենսդրության՝ իրականացվում է ուսուցիչների պարտադիր ատեստավորում, և յուրաքանչյուր ուսուցիչ պետք է 5 տարին մեկ ատեստավորվի: 2012թ. առաջին անգամ անցկացվեցին նախատեսատվորման վերապատրաստումներ 848 ուսուցիչների մասնակցությամբ: Այս օրերին ևս ընթանում են վերապատրաստումներ: Նման աշխատանքներ իրականացվում են նաև ներառական կրթության ասպարեզում:

Տարեցտարի բարելավվում է դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումը: Նախարարության «Ապետ» ռազմամարզական ճամբարին ավելացել է «Գանձասար» հանգստի ճամբարը, որոնցում հանգստացել են շուրջ 720 դպրոցականներ: 2013-ին նախարարության ճամբար կգործի նաև Շուշիում:

Առանձնակի ուշադրություն է դարձվում արտադպրոցական դաստիարակությանը: Բոլոր շրջաններում գործում են մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ: Բացի այդ, կան նաև արտադպրոցական մշակութային և մարզական հիմնարկներ, որոնցում ընդգրկված են 8000-ից ավելի երեխաներ:

Սովորողների ունակությունների և կարողությունների բացահայտման, ինչպես նաև շնորհաշատ երեխաների հայտնաբերման նպատակով անցկացվում են տարբեր կարգի մարզական մրցումներ, ռազմամարզական, ինտելեկտուալ խաղեր, առարկայական օլիմպիադաներ: 2012թ. 11 առարկաներից անցկացված



առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են ստացել 9-12-րդ դասարանների 315 դպրոցականներ, որոնցից 104-ը տարբեր առարկաներից մրցանակային տեղեր են զրավել և խրախուսանքի արժանացել: Պարզևատրվել են նաև առավել բարձր արդյունքների հասած աշակերտների 38 ուսուցիչներ: 41 մասնակիցների իրավունք է վերապահվել մասնակցելու ՀՀ-ում կայացած օլիմպիադայի հանրապետական փուլին, ինչի արդյունքում 21 մասնակից տարբեր առարկաներից արժանացել է հետևյալ մրցանակների. մեկ հոգի՝ I կարգի, երեք հոգի՝ II կարգի, երեք հոգի՝ III կարգի դիպլոմների, իսկ 14 աշակերտներ՝ գովասանագրերի:

Արդեն ավանդույթ է դարձել «Այբ» կրթական հիմնադրամի աջակցությամբ «Կենգուրու» մաթեմատիկական և «Рыцарский медвежонок» լեզվագիտական տրամաբանական խաղ-մրցույթների կազմակերպումը, որոնց մասնակիցների շրջանակը տարեցտարի ընդլայնվում է:

2012թ. հանրակրթական դպրոցների 2-րդ դասարանների ուսումնական ծրագրերում սահմանվել է «Շախմատ» առարկան, որը հաջողությամբ ուսուցանվում է: Շարունակվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառական կրթության իրականացումը: Ներկա դրությամբ 153 սովորողներ ընդգրկված են ներառական կրթություն իրականացնող 9 դպրոցներում, իսկ 142-ը՝ հանրակրթական այլ դպրոցներում: Այդ նպատակով կահավորվել են հատուկ կաբինետներ ներառական կրթություն իրականացնող բոլոր դպրոցներում:

Նախադպրոցական կրթության ոլորտը հատուկ ուշադրության կենտրոնում է, կարևորվում են նախադպրոցական ցանցի վերականգնումն ու հետագա ընդլայնումը: Ներկայումս գործում են 41 մանկապարտեզներ, որից 27-ը

պետական հաստատություններ են: Պետությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում նաև ՀՕՍ-ի հովանավորությամբ գործող 8 մանկապարտեզների: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված է 2996 երեխա, որից 2615-ը՝ պետական, իսկ 744-ը՝ ոչ պետական մանկապարտեզներում: Այդ տարիքի երեխաներին դպրոցին նախապատրաստելու նպատակով դպրոցներին կից գործում են 36 նախապատրաստական խմբեր՝ 682 երեխաների ընդգրկմամբ: Մոտակա ժամանակահատվածում մանկապարտեզ կբացվի Հաղորտի շրջանի Դրախտիկ գյուղում: 7 մանկապարտեզների շենքեր շինարարության ընթացքում են: Մանկապարտեզների պահանջարկը բավականին մեծ է, առանձնապես՝ մայրաքաղաքում: Այդ խնդիրը պետության ուշադրության կենտրոնում է, և այդ ուղղությամբ ընթանում են համապատասխան աշխատանքներ:

Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության ոլորտներում նույնպես բարեփոխումներ են իրականացվում:

Կրթության և գիտության նախարարությունը աշխատանքներ է տանում գիտամանկավարժական կադրերի երիտասարդացման ուղղությամբ: Յուրաքանչյուր տարի մասնագիտական կադրերի անհրաժեշտության ճշգրտման միջոցով սահմանվում են մագիստրոսական և հետբուհական կրթության նպատակային տեղերը:

2012-2013 ուսումնական տարում անվճար ուսուցման հիմքերով ՀՀ առաջատար բուհերի մագիստրատուրա են ընդունվել բակալավրի որակավորման 40 շրջանավարտներ: Հայաստանի Ամերիկյան համալսարանի մագիստրատուրա են ընդունվել բակալավրի որակավորման երեք շրջանավարտներ, 8 շրջանավարտներ մասնագիտական կրթություն են ստանում արտերկրի առաջատար բուհերում:

ՕՐԱԳԻՐ

ՄԵԾ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐԿԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Իտալահայ բարերարներն Արցախում

Ստեփանակերտի Հովհ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցն ունեցավ ժամանակակից համակարգչային դասարան: Այն իտալահայ բարերարներ՝ տեր և տիկին Սարո և Սիրան Խուրադվերդիների նվերն է դարձրել: Նշենք, որ այս բարերարների միջոցներով անցյալ տարի համակարգչային դասարան է բացվել մայրաքաղաքի հ. 5 հիմնական դպրոցում:

Օրերս բարերար Սարո Խուրադվերդիի և Իտալիայի Հայկական միության նախագահ Պայքար Սվազյանը Արցախում էին: ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի ուղեկցությամբ նրանք եղան հ. 9 դպրոցում, որտեղ տեղի ունեցավ համակարգչային դասարանի հանդիսավոր բացումը:

Հյուրերը նախ եղան դպրոցի փառքի սրահում, իրենց խոնարհունը բերեցին կրթության շրջանավարտ զոհված ազատամարտիկների հիշատակին՝ ծաղիկներ տեղադրելով և մոմավառություն կատարելով: Այնուհետև ներկա գտնվեցին իրենց պատվին դպրոցականների ուժերով կազմակերպ-

վեր հանձնեց՝ հայտարարելով, որ նրանք միշտ սպասված հյուր են դպրոցում՝ որպես հարազատ օջախ:

Ջերմ ընդունելությունից հուզված էր բարերարը: Եվ մանավանդ այն մտքից, որ կարողացել է այդ ձևով՝ ի նպաստ Արցախի երեխաների կրթության, բարեգործություն անել այն ակնկալիքով, որ վաղվա արժանավոր սերունդն է մեծանում, նաև որդիական իր սուրբ պարտքը կատարել դպրոցատեղի հոր՝ Կարապետ Խուրադվերդիի հանդեպ, հենց որի հիշատակին էլ կոչված է համակարգչային դասարանը: Տիկնոջ հետ որոշել են ամեն տարի Արցախի մի դպրոցի նման նվիրատվություն կատարել: Հ.

կայն, երեխաները երախտագիտության խոսքեր ուղղեցին բարերարներին:

Ճակատագիրը երկու իտալահայերին՝ Պայքար Սվազյանին և Սարո Խուրադվերդիին միացրել է վաղուց: Նրանք մանկության ընկերներ են: Երկուսն էլ Ցեղասպանությունից մազապուրծ փրկված գերդաստանների զավակներ: Մեկի ծնողները գաղթել են Արևմտյան Հայաստանից, մյուսինը՝ Թեհրանից և հանգրվանել Իտալիա-



ված գրական-գեղարվեստական փոքրիկ մոնտաժին, որտեղ հնչեցին հայրենասիրական տողեր, երգ-երաժշտություն:

Դպրոցի տնօրեն Արթուր Անտոնյանի ողջույնի խոսքը, որը միաժամանակ մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների անունից երախտագիտություն էր մատաղ սերունդի կրթությունը քաղաքակիրթ աշխարհին համաքայլ ընթացակարգում միտված բարերարների ազնիվ ձգտումներին, նաև Արցախյան շարժման պատմական նշանակության շեշտադրում էր. ձեռք բերեցինք ոչ միայն անկախ հանրապետություն, այլև Արցախ-Հայաստան-Սփյուռք հզոր եռամիասնություն: Այդ միասնությունը մեզ առաջնորդում էր ոչ միայն պատերազմական դժվարին օրերին, այլև տապալակված վերականգնման տարիներին ու այսօր նաև, երբ Արցախը «հաստատուն բարեփոխումների ժամանակաշրջան» է թևակոխել: Ուրեմն, մեզ վիճակված է ավելի մեծ բարձունքներ նվաճել: Ի նշան խորին երախտագիտության Սարո և Սիրան Խուրադվերդիներին և նրանց ամբողջ գերդաստանի՝ տնօրենը Սարո Խուրադվերդիին դպրոցի կողմից հուշան-

5 դպրոցի համակարգչային դասարանը, որի մասին վերը նշեցինք, Սիրան Խուրադվերդիի հոր՝ դոկտոր Կարապետ Բորանյանի հիշատակին է:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը խորհրդանշական համարեց Արցախյան շարժման 25-րդ հոբելյանական տարում հեռավոր Իտալիայում բնակվող հայ բարեկամներից մեկն նվեր ստանալը, որն ուղղված է այն բանին, որ Արցախի երեխաները հետ չմնան զարգացած երկրների իրենց հասակակիցներից: «Անկասկած, մեծ հաջողություններ են համակարգչային դասարանը կնպաստի ուսման որակի բարձրացմանը», - ասաց նախարարը՝ երախտագիտություն հայտնելով բարերարներին՝ մայրաքաղաքի հ. 2 դպրոցում համակարգչային դասարան բացելու նրանց հ աջորդ մտադրության համար:

Հյուրերին պատիվ էր տրված կտրելու համակարգչային դասարանը երիզող կարմիր ժապավենը: Վերջին սերնդի 11 համակարգիչները, մեծ էկրանը և համացանցին միացած լինելը նպատակին ծառայելու դեպքում, անկասկած, հետաքրքիր կդարձնեն դասերը: Առաջին գործողությամբ, սա-

յում: Պայքարը և Սարոն 11 տարեկանից համախել են Մուրադ-Ռաֆայելյան վարժարան, կրթվել ու դաստիարակվել հայեցի: Այսօր էլ Պայքար Սվազյանի մասնագիտությունը հայերենը տարածելն է. 38 տարի է՝ նա դասախոսում է Միլանի պետական համալսարանում, դասավանդում է հայոց լեզու և գրականություն: Ունկնդիրներն իտալացիներ են, որոնք հետաքրքրվում են հայերենով: Սարո Խուրադվերդին ճարտարապետ-ուրբանիստ է, հիմնական մասնագիտությամբ աշխատում է Միացյալ Նահանգներում, իսկ Իտալիայում զբաղվում է գործարարությամբ: Բայց այդքանով հանդերձ, նրանք իրենց կյանքի գործը համարում են Իտալիայի հայ համայնքին ակտիվ ծառայելը: Ինչպես տեղեկացանք միության ղեկավար Պայքար Սվազյանից, թեպետ մեծ չէ հայկական գաղութը (ընդամենը 2700 հայ, երկու Հայ Առաքելական եկեղեցի), այնուամենայնիվ, կայացած համայնք է և իր նպաստն է բերում հայրենիքի զարգացմանը: Սկսած 1992-ից, պատերազմական այն դժվար օրերից, համայնքը օգնության ձեռք է հասցնում Արցախին: Այսօր այդ օգնությունը կատարվում է ինչպես «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով, այնպես էլ առանձին նվիրատվությամբ, ինչպես դա Սարո և Սիրան Խուրադվերդիների դեպքում է, որոնք ցանկացել են այդ ձևով իրենց ընտանեկան հիշողությունները թողնել Արցախում: «Արցախում դպրոց չպետք է ըլլա, որ այդ տեսակ դասարան չունենա»՝ այսպիսի պարտավորություն են ստանձնել Խուրադվերդի ամուսինները: «Սա երկար ճանապարհի առաջին քայլերն են», - ասաց Իտալիայի հայկական միության նախագահը:

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ԴՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

Բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումներն ընթանում են հայաստանյան բուհերին համաքայլ և սերտ համագործակցության պայմաններում: Նախարարը նշեց, որ ԼՂՀ բուհերի կայացման ու զարգացմանը իրենց աջակցությունն են ցուցաբերում ՀՀ բուհերը, իսկ որակյալ և խիստ անհրաժեշտություն ունեցող մասնագետների պատրաստմանը մեծապես նպաստում է երկու հանրապետությունների կառավարությունների և նախարարությունների համաձայնագրով ամրագրված տարեկան 60 բակալավրական, 30 մագիստրոսական և 5 ասպիրանտական ամվճար ուսուցման տեղերի հատկացումը ՀՀ առաջավոր բուհերում:

Հետևողական աշխատանքներ են տարվում բուհում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Մասնավորապես, դրան նպաստում է առաջին կուրսերում քննաշրջանը թեստերով, համակարգչի միջոցով անցկացնելու եղանակը, որն աստիճանաբար կտարածվի բոլոր կուրսերում:

Գիտության զարգացման գործում մեծ դեր ունի Արցախի նորաստեղծ գիտական կենտրոնը, որի ամնիջական ղեկավարությամբ իրականացվում են գյուղատնտեսության, շինարարության, ընդերքի հետազոտման, ինչպես նաև Արցախի բանախոսության և պատմության ուսումնասիրման բնագավառներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ, և ընդգրկված են ԼՂՀ և ՀՀ պետական բուհերի ու համալսարանային կառույցների գիտաշխատողները: ՀՀ ՊԱՍ-ի գործում աջակցությամբ և պետական բյուջեով հատկացված միջոցների ներդրմամբ կենսաքիմիական ուղղություն ունեցող երեք լաբորատորիաներում գիտական աշխատողների և լաբորատորիայի վարիչների ներգրավմամբ իրականացվում են գիտական հետազոտություններ 5 թեմաների գծով՝ 20 մլն դրամ գումարով, որից 18 մլն դրամը հատկացվել է ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից: 2013թ. կհատկացվի ևս 5 մլն դրամ:

2012թ. Արցախի գիտական կենտրոնի ղեկավարությամբ իրականացվել է 8 թեմա՝ 19,33 մլն դրամ գումար ֆինանսավորմամբ, որոնցից մեկի կատարումն ավարտվել է, իսկ 7 թեմաներ կշարունակեն իրականացվել 2013-ին:

Նախարարության կազմում գործում են երկու տեսչություններ: Լեզվի պետական տեսչությունը վերահսկողական գործառնություն է միջոցառումներ է իրականացնում լեզվական քաղաքականության բնագավառում՝ ստուգումներ կատարելով մի շարք կազմակերպություններում, հիմնարկներում և խմբագրություններում, նկատված թերությունների մասին տրվել են համապատասխան ամփոփագրեր:

Կրթության պետական տեսչության կողմից ստուգումներ ու մեթոդական օգնություն է իրականացվել 33 դպրոցներում և 7 մանկապարտեզներում, կատարվել են առարկայական ու թեմատիկ 19 տարաբնույթ ստուգումներ:

Սովորողների արտաքին ընթացիկ գնահատման նպատակով 2012թ. զգալի աշխատանք է կատարվել գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից: Ըստ առարկաների ստուգվել է 1051 դասարան, 9724 աշակերտ: Ստուգումները դրական տեղաշարժ են արձանագրել ուսման որակի և առաջադիմության բարձրացման ուղղությամբ: Այսպես, 2010թ. համեմատությամբ՝ «ամբավարար» գնահատականների քանակը նվազել է 10-20%-ով, «լավ» գնահատականներն աճել են 4-11%-ով: 2010թ. գերազանց գնահատականներ չեն գրանցվել, իսկ 2012թ. գերազանց գնահատվել է 107 գրավոր աշխատանք:

Ս. Ասրյանն այնուհետև պատասխանեց լրագրողների հարցերին: Մասնավորապես այն հարցին, թե ծանրաբեռնվածություն չէ՞ ռուսերինց բացի երկու օտար լեզուներ ուսումնական ծրագրեր մտցնելը կրտսեր օղակում, նախարարը պատասխանեց, որ բողոքներ չեն ստացել այդ ուղղությամբ, հատկապես այնտեղ, որտեղ դասավանդման մակարդակը բարձր է, ճյուղի գոհ են: Հարց հնչեց, որ դպրոցների մեծ մասն ապահովված չէ մարզական գույքով: Նախարարը պատասխանեց, որ այդ ուղղությամբ ծրագիր են կազմել, որը շատ ծախսատար է: Հարցը լուծվում է բարեգործական խողովակներով: Նա նաև տեղեկացրեց այս շաբաթ սպասվող ուրախալի մի իրադարձության մասին. ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան վերապատրաստումներ կանցկացնի մասնագետների հետ (ֆուտբոլը մտցված է ուսումնական պլան) և համապատասխան մարզահագուստով ու գնդակներով կապահովի դպրոցներին: Իսկ այն հարցին, թե ինչ է արվում գյուղական դպրոցները երկրորդ պահակով ապահովելու ուղղությամբ, Ս. Ասրյանը տեղեկացրեց, որ նոր ուսումնական տարվանից կլուծվի այդ հարցը: Քանի՞ վերապատրաստված ուսուցիչ է հայտնաբերվել տարակարգ ստանալու և ըստ այդմ՝ հավելա-վճար ստանալու համար հարցին նախարարը պատասխանեց, որ շատ քիչ՝ ընդամենը երկու հոգի, թեպետ կարգը գործում է:

Ս. Ասրյանը լրագրողներին շնորհակալություն հայտնեց ակտիվ համագործակցության համար՝ հայտարարելով, որ իր աշխատասենյակի դռները միշտ բաց են նրանց առջև:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Գիտագործնական

ՆՎԻՐՎԱԾ ԱՐՃԱՆՅԱՆ ԸՆԴՈՒՄԱՆԸ

Հանրապետության բոլոր կրթական հաստատություններում, բնակավայրերում Տեղի են ունենում միջոցառումներ՝ նվիրված Արցախյան շարժման 25-րդ տարեդարձին: Դրանք անցկացվում են տարբեր ձևաչափերով՝ հանդիպումներ Արցախյան Շարժման առաջամարտիկների հետ, գրական-գեղարվեստական համոզանքներ:

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարանում արդեն մի միջոցառում անցկացվել է: Շարժման մի խումբ առաջամարտիկներ հյուրընկալվել են բուհում՝ ուսանողների հետ հանդիպման ժամանակ իրենց հուշերը ներկայացրել փետրվարյան այն խռովահույզ օրերի մասին: Դրանից շատ չանցած՝ տեղի ունեցավ երկրորդ միջոցառումը, որը գիտական բնույթի էր: Համալսարանի տարբեր առարկաների դասախոսներ, ինչպես նաև ԼՂՀ ԱԺ պատգամավոր, վաստակավոր լրագրող Վարդգես Բաղդասյանը զեկուցումներ կարդացին Արցախյան շարժման թեմայով՝ յուրաքանչյուրն իր մասնագիտության գծով:

Գիտագործնական կոնֆերանսը բացեց բուհի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը: Նրա համոզմամբ՝ Արցախյան շարժումը չպետք է միայն հորելյանական առիթներով ակտիվ քննարկումների թեմա դառնա, այն մշտապես պետք է լինի հասարակության, մասնավոր՝ երիտասարդության ուշադրության կիզակետում, քանզի հատկապես վերջիններս, որոնց վիճակված է կրել ազգային-ազատագրական պայքարով ձեռք բե-



www.artsakh.tv



Ստեփանակերտ

րած արժեքները, պետք է լավ տեղեկացված լինեն այդ իրադարձություններին, տեղեկատվություն ստանալով ինչպես առաջին աղբյուրից՝ Շարժման առաջամարտիկներից, այնպես էլ գիտական վերլուծությունների ձևով:

«Արցախյան շարժումը և ԼՂՀ հռչակումը» թեմայով զեկուցում կարդաց «Գրիգոր Նարեկացի» համալսարանի դասախոս, դոցենտ, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Անուշավան Պողոսյանը: Բանախոսը պատմական էքսկուրս կատարեց մինչև Արցախի վաղնջական ժամանակները, նրա միացումը Ռուսաստանին, այնուհետև՝ խորհրդային Ադրբեջանին բռնակցումը 1923թ: Նրա մեջ են եղել ինքնավար մարզի սահմանից դուրս թողնված այն տարածքները, որտեղ ավելի ուշ ստեղծվել են Շահումյանի, Քելբաջարի, Լաչինի վարչական շրջանները՝ դրանով իսկ ինքնավար մարզը զրկվելով Հայաստանի հետ ընդհանուր սահմանից, դառնալով անկախ վայրի տարածք: Այնուհետև նա կանգ առավ Ադրբեջանի իշխանությունների վարած հակահայկական քաղաքականության վրա, որի նպատակը Ղարաբաղը հայաթափելն էր: Մասնավորապես բերվեց հետևյալ փաստը: ԼՂԻՄ-ը Անդրկովկասի 8 վարչաքաղաքական տարածքային միավորումներից միակն էր, որի արմատական բնակչությունը՝ հայերը, 1923-1980թթ. չէր աճում: Դրա հե-

տագա զարգացումը չկանխելու դեպքում ԼՂ-ն կհայտնվեր հայաթափման վտանգի առջև և կկրկներ Նախիջևանի ճակատագիրը: Այս տխուր հեռանկարն էր, որ Ղարաբաղի հայության մեջ մշտապես բարձր էր պահում Ադրբեջանի ճնշումից ազատվելու, սեփական կյանքն ինքնուրույնաբար տնօրինելու բնական ձգտումը: Դժգոհ լինելով դարաբաղյան հարցի անարդար լուծումից, Ադրբեջանի իշխանությունների խտրական, հայակուլ քաղաքականությունից՝ ԼՂԻՄ բնակչությունը շարունակեց պայքարը մայր Հայաստանին միանալու համար: «Նրա բողոքի ձայնը չլրեց անգամ ստալինյան բռնապետության, խրուշչովյան ծնիալի, բրեժնևյան լճացման տարիներին: Գորբաչովյան վերակառուցման ժամանակ ուրվագծվում էր նրա արդար լուծման հեռանկարը»,- վկայեց զեկուցողը: Եվ ԼՂԻՄ ժողովուրդը նորից բարձրացրեց դեռևս 1920-ական թթ. միացող դարաբաղյան հիմնախնդիրը և որոշեց սահմանադրական եղանակով լուծում տալ խնդիրն: Բանախոսը կանգ առավ Շարժման բոլոր կարևոր իրադարձությունների վրա:

Համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Ռոմա Բալայանի զեկուցման թեման էր՝ «Կանայք Արցախյան պատերազմում»: Հայոց պատմության հերոսական էջերից է Արցախյան ազգային-ազատագրական շարժումը, որի տարեգրությունը հարուստ է հայ քաջորդիների և արիասիրտ դուստրերի սխրանքներով: Բանախոսը ներկայացրեց նրանցից մի քանիսին:

ԼՂՀ ԱԺ պատգամավոր, վաստակավոր լրագրող Վարդգես Բաղդասյանը, որի Շարժման մասին ստեղծած ֆիլմաշարը և գիրքը, Վ. Հակոբյանի գնահատմամբ, աղբյուրագիտական նշանակություն ունի, ներկայացրեց Ղարաբաղյան շարժման լուսաբանումը Արցախի հեռուստատեսությամբ: Նրա ծնունդը համընկավ Արցախյան շարժմանը և, բնականաբար, դարձավ Շարժման և Ազատամարտի խոսափողն ու գաղափարախոսը: Բանախոսն առանց հուզմունքի չկարողացավ արտահայտվել հեռուստատեսությամբ այն նվիրյալների մասին, որոնց տքնաքան աշխատանքի շնորհիվ հաղորդումները հասցվում էին Հայաստան և նրա սահմաններից դուրս, ովքեր պայքարում էին ոչ միայն տեսախցիկով, այլև կյանքի գնով:

Համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Տաթև Սողոմոնյանը, դասախոսներ Անալյա Գրիգորյանը, Անժելիկա Գրիգորյանը. Գեղամուշ Արզումանյանը կարդացին զեկուցումներ «Արցախի ազգային-ազատագրական պայքարի արտացոլումը Վարդան Հակոբյանի պոեզիայում», «Արցախի ազգային-ազատագրական պայքարի արտացոլումը Ջորի Բալայանի գեղարվեստական հրապարակախոսության մեջ», «Արցախյան շարժումը՝ որպես համայն հայության ինքնագիտակցության զարթոնք», «ԼՂՀ հիմնախնդրի միջազգայնացումը» թեմաներով:

Միջոցառումը բարձր գնահատեց ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Արմեն Սարգսյանը՝ ասելով, որ համալսարանը շնորհակալ գործ է ձեռնարկել՝ Արցախյան շարժման անդրադառնալով գիտական մակարդակով, ընդգրկելով տարբեր բնագավառներ՝ պատմություն, քաղաքականության պատմություն, լրագրություն, հրապարակախոսություն, գրականագիտություն:

Կոնֆերանսն ամփոփեց բուհի ռեկտոր Վ. Հակոբյանը:

ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԱԽԱՍՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Սկսված է ԼՂՀ ուսուցիչների երկրորդ խմբաքանակի նախատեսավորման գործընթացը: Մարտի 15-24-ը Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմ-

նա վերապատրաստումներն անցնում են երեք ուղղությամբ. 60 ժամ՝ առարկայական, 12 ժամ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, 8 ժամ՝ օրենսդրության վերաբերյալ: Վեր-



ջում ուսուցիչներն ստանում են համապատասխան վկայական՝ 5 տարի ժամկետով, որի հիման վրա տվյալ ուսուցիչը կարող է դիմել համրապետական հանձնաժողով և տարակարգ ստանալ ու ըստ այդմ էլ՝ հավելավճար: Համակարգող դասախոսի տվյալներով՝ ՀՀ-ում վերապատ-

րաստված ուսուցիչների շուրջ 20 տոկոսը դիմել է տարակարգ ստանալու: Նշենք, որ Արցախում տարակարգի հարցով հայտատուները դեռ քիչ են: Գ. Առստամյանի վկայությամբ՝ դասընթացներն անցնում են ակտիվությամբ պայմաններում, ուսուցիչների կողմից բացակայությունները քիչ են: Վերապատրաստման մոդուլներն ամեն տարի թարմացվում են: Դասախոսներն աշխատում են տարբեր մեթոդներով՝ ելնելով լսարանի պահանջարկից, մակարդակից, քանակից, թեմայի բարդությունից ու նշանակությունից: Գ. Առստամյանի տպավորությամբ ուսուցիչները՝ գոհ են, քանի որ բավական մեծ օգտակար տեղեկատվություն են ստանում: Փորձը ցույց է տալիս, որ ուսուցիչները քիչ բան գիտեն հատկապես օրենսդրությունից, իրենց իրավունքներից ու պարտականություններից, նույնիսկ աշխատավարձի և արձակուրդների տրման մասին: Այդպես է նաև Հայաստանում: Հավելենք, որ վերապատրաստման դասընթացներն անց են կացնում ճանաչված անուններ՝ դասագրքերի հեղինակներ, գիտության գործիչներ:

ԱՎԵԼՈՐԴ ԳԻՏԵԼԻՔ ԶԻ ԼԻՆՈՒՄ

ՀՀ կրթության ազգային ինստիտուտի Արցախի մասնաճյուղն անցկացնում է ուսուցիչների 12-ժամյա վերապատրաստման դասընթացներ: Փետրվարի սկզբից սկսած վերապատրաստումներն արդեն անցկացվել են Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջաններում, առաջիկայում կկազմակերպվեն Հաղոթում, ամենավերջում՝ մայրաքաղաքում: Ինչպես տեղեկացանք ԿԱԻ մասնաճյուղի տնօրեն Միխայիլ Գևորգյանից, վերապատրաստումներն ընթանում են երեք ուղղությամբ՝ համակարգչային, գրադարանային և դասողեկական: Բոլոր առարկաների ուսուցիչները համակարգչային գրագիտության զարգացման դասընթացներ են անցնում, նրանց ծանոթացնում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններին ու դրանց կիրառմանը դասապրոցեսին: Գաղտնիք չէ, որ ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում համակարգչին: Իսկ ներկա ժամանակներում առանց համակարգչային հզոր բազայի օգտագործման՝ դասի արդյունավետ կազմակերպումը ոչ լիարժեք է: Ուսուցիչների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կարևորվում է ինչպես մասնագիտական, մանկավարժամեթոդական, այնպես էլ տեղեկույթի համապարփակ իմացությունը:

Վերապատրաստումների երկրորդ ուղղությունը գրադարանային գործի գծով է: Չնայած այսօր մեծ թափ է հարդրվում էլեկտրոնային գրադարաններին, բայց քանի որ դրանք դեռևս մեծ չափով չեն մտել մեր կյանք, ժամանակակից տեխնոլոգիաների հետ միասին քարոզվում է նաև ավանդականը: ԿԱԻ մասնաճյուղը Արտո Մարտիրոսյանի խոսքով՝ այդ բնագավառը մեզանում, հատկապես շրջաններում, ամենիսթար վիճակում է: Համայնքային գրադարանները լուծարվել են, միացվել դպրոցականին: Աշխատողները գրադարանային գործն այնքան էլ լավ չեն պատկերացնում, նրանց մեծ մասը մասնագետներ չեն և կարիք ունեն նախնական գիտելիքների: Գրադարանի աշխատողի հիմնական գործառնությունը գրադարանային գործն է միայն: Վերապատրաստումների ընթացքում նրանց տրամադրվում են գրադարանային գործին առնչվող նորմատիվ փաստաթղթերի փաթեթ և դրանց համապատասխան նյութերը, որոնց թվում նաև՝ գրադարանի աշխատողի տարեկան աշխատանքի գնահատման չափորոշիչները:

Վերապատրաստումների մի ուղղություն էլ դասողեկական աշխատանքին է առնչվում: Այն բազմաճյուղ և բազմակողմ գործընթաց է: Անժի համակողմանի զարգացման գործում կարևորվում են դաստիարակության բոլոր ձևերը:

ԿԱԻ-ի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացները կշարունակվեն նաև առաջիկա ամսին:

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ

ԴԱՍ-ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ

«Հայրենասիրությունը կեցվածք չէ և ոչ էլ մոդայիկ հագուստ: Հայրենասիրությունը ոգու որոշակի վիճակ է, որ չի հանդուրժում անտարբերություն և ցուցամոլություն... Պետք է գիտակցված գնալ մահվանը ընդառաջ»:

Մի ազատամարտիկի խոսքերից

Հանրակրթական դպրոցներում այսօր հանապազօրյա գերխնդիր է հայրենասիրական դաստիարակությունը դասապրոցեսում և առհասարակ: Հայրենիքի վաղվա պաշտպանը ձևավորվում ու հասունանում է դպրոցում: Հայրենիքի հանդեպ սիրո ու նվիրվածության հունդերը սերմանողն ուսուցիչն է, ով ամենօրյա գիտելիքների հաղորդմանը զուգընթաց՝ հայրենասիրական ոգի պիտի ներշնչի մատաղ սերունդի սրտերում: Այսօրվա ազատամարտիկի հունդերը սերմանողն ուսուցիչն է, ով ամենօրյա գիտելիքների հաղորդմանը զուգընթաց՝ հայրենասիրական ոգի պիտի ներշնչի մատաղ սերունդի սրտերում: Այսօրվա ազատամարտիկի հունդերը սերմանողն ուսուցիչն է, ով ամենօրյա գիտելիքների հաղորդմանը զուգընթաց՝ հայրենասիրական ոգի պիտի ներշնչի մատաղ սերունդի սրտերում: Այսօրվա ազատամարտիկի հունդերը սերմանողն ուսուցիչն է, ով ամենօրյա գիտելիքների հաղորդմանը զուգընթաց՝ հայրենասիրական ոգի պիտի ներշնչի մատաղ սերունդի սրտերում:

դույթ է դարձել այս երևույթը. պատեհ առիթների դեպքում անց են կացվում հետաքրքիր, ուսանելի դաս-միջոցառումներ: Հերթականը կազմակերպվեց 11-րդ դասարանի աշակերտների հետ (ուսուցիչ-դասուղեկ՝ Լ. Աբրահամյան), փետրվարի 23-ին՝ Հայրենիքի պաշտպանի օրը. այն նվիրված էր նաև Արցախյան զարթոնքի 25-ամյակին: Գրականության դասը վեր էր անցվել իսկական արիության, հայրենյաց դասի, որը վարում էին Արցախյան զոհաբերած մասնակից ազատամարտիկ-ծնողները և Շարժման ակտիվիստները: Այդ դասի ժամանակ մեկ անգամ ևս արժևորվեց այն գաղափարը, որի համար ծագել է ազգային զարթոնքը, երբ արցախցին բարձրաձայնեց ինքնորոշման իր իրավունքի մասին: Ուսուցչուհին բացեց դասը՝ կազմակերպական մասում ողջունելով ներկաներին ու հայտնելով դասի անցկացման իր նպատակների մասին: Աշակերտները դասին ներկայացրեցին կազմ ու պատրաստ՝ իրենց գեղեցիկ ելույթներով ապացուցելով, որ իրենք գիտեն, արդեն ամբողջությամբ պատկերացնում են ազգային զարթոնքի բուն էությունը: Պատանիները պատրաստ են դառնալ ազատ ու անկախ Արցախի վաղվա զինվորը՝ հետևելով իրենց հայրերի օրինակին:

Սա, իրոք, բաց դաս էր, ազատ՝ մասնակիցների և ունկնդիրների առումով, ուստի ես էլ՝ որպես հայոց լեզվի մեթոդիավորման անդամ, առիթ բաց չթողեցի մասնակցելու և իմ խոսքն ասելու մեր աշակերտների առջև: Դասն ավելի տպավորիչ դարձավ, երբ ելույթներով հանդես եկան պատերազմի մասնակից ազատամարտիկ-ծնողները: Նրանցից մեր համայնքի ղեկավար է. Մոսիյանը ներկայացրեց Արցախյան պատերազմի ծագման շարժառիթների, մեր հերոսական ժողովրդի սխրագործությունների մասին հետաքրքիր փաստեր: Իր խոսքում նա հիմնական շեշտը դրեց հայրենասիրություն, ազգային արժանապատվություն, ինքնորոշման իրավունք հասկացությունների վրա: Նա կոչ արեց դպրոցականներին հարգել պատերազմի վետերաններին, հպարտ քայլել նրանց հետ, ասել թշնամուն, քանզի նրան չի կարելի վստահել, չնոռանալ ազգի համար իրենց կյանքը տված քաջորդիներին: Պատանիների մեջ վառեց հայրենիքի վաղվա զինվորը դառնալու ցանկությունը՝ ասելով, որ տերը պիտի լինենք մեր ազգային արժեքների պահպանման, մեր երկրի ազատության ու անկախության հարստման:

Սա, իրոք, բաց դաս էր, ազատ՝ մասնակիցների և ունկնդիրների առումով, ուստի ես էլ՝ որպես հայոց լեզվի մեթոդիավորման անդամ, առիթ բաց չթողեցի մասնակցելու և իմ խոսքն ասելու մեր աշակերտների առջև: Դասն ավելի տպավորիչ դարձավ, երբ ելույթներով հանդես եկան պատերազմի մասնակից ազատամարտիկ-ծնողները: Նրանցից մեր համայնքի ղեկավար է. Մոսիյանը ներկայացրեց Արցախյան պատերազմի ծագման շարժառիթների, մեր հերոսական ժողովրդի սխրագործությունների մասին հետաքրքիր փաստեր: Իր խոսքում նա հիմնական շեշտը դրեց հայրենասիրություն, ազգային արժանապատվություն, ինքնորոշման իրավունք հասկացությունների վրա: Նա կոչ արեց դպրոցականներին հարգել պատերազմի վետերաններին, հպարտ քայլել նրանց հետ, ասել թշնամուն, քանզի նրան չի կարելի վստահել, չնոռանալ ազգի համար իրենց կյանքը տված քաջորդիներին: Պատանիների մեջ վառեց հայրենիքի վաղվա զինվորը դառնալու ցանկությունը՝ ասելով, որ տերը պիտի լինենք մեր ազգային արժեքների պահպանման, մեր երկրի ազատության ու անկախության հարստման:

մեծ հանդիսավորությամբ նշվել էր Արցախյան շարժման 25-ամյակը, հայոց լեզվի մեթոդիավորման կողմից աշակերտների շրջանում անց էր կացվել ստեղծագործական շարժարության մրցույթ՝ «Ազատ ու անկախ Արցախ» թեմայով, կազմել էին գեղեցիկ ցուցապատառներ՝ նվիրված մեծ Ազատամարտին: Հաղորդի շրջվարչակազմի կողմից հայտարարված շարժարության մրցույթում իններորդի Ս. Ստեփանյանը ակտիվ մասնակցության համար արժանացավ պատվոգրի: 9-րդ դասարանի աշակերտները դասուղեկի ժամին (դասուղեկ՝ Զ. Սահակյան) այցելեցին զոհված ազատամարտիկների հուշահամալիր և ծաղկեփնջեր դրեցին նրանց հիշատակի համար երկինք խոյացող հուշարձանի պատվանդանին: Նրանք հնչեցրին հայրենաշունչ ոտանավորներ ու երգեր: Փետրվարյան այդ շաբաթը հագեցած էր մեր դպրոցում, որն, անշուշտ, իր դրական ազդեցությունը կթողնի մեր աշակերտների հայրենասիրական դաստիարակության վրա:

Քննույց ՍԱՅԱԿՅԱՆ Տունու ակ. Ա. Աբրահամյանի անվան միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԴԱՍՆ ԱՆՅՎԱԾՎԵՑ ԶՈՒՇԱԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայրենյաց պաշտպանի օրվա առթիվ արիության դասեր անցկացվեցին մայրաքաղաքի բոլոր ուսումնական հաստատություններում: Ձուկված ազատամարտիկների թանգարանում վարույց ավանդույթ է դարձել ռազմահայրենասիրական դասերի կազմակերպումը: Հետաքրքիր էր Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի «Ես քո պաշտպանն եմ» խորագրով միջոցառումը, որի հերոսները 2-րդ «Ե» դասարանի աշակերտներն էին: Այն ավելի ընդհանրացված և ամփոփ ձևով կազմակերպվեցին՝ ի դեմս դասվար Լ. Գրիգորյանի, որոշեցին տեղափոխել սրբավայր դարձած հուշաթանգարան: Նպատակն էր երեխաների մեջ դաստիարակել հայրենասիրություն, բարձրացնել ազգային և հայրենասիրական ոգին, ծանոթացնել ազատագրական պայքարի ջատագովներին, հարգանքի տուրք մատուցել ազատ և անկախ հայրենիք պարգևողներին: Ներկա էին Պաշտպանության բանակի բարձրաստիճան սպաներ, Ստեփանակերտի փոխբաղադրատեսուցի Ա. Հակոբյանը, բարձրաստիճանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կ. Մարգարյանը, հանրակրթական դպրոցների դասավարներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հյուրեր, զոհված ազատամարտիկների մայրեր: Բացման իր խոսքում դպրոցի փոխտնօրեն ժամնա Գրիգորյանը բարենաղանքի խոսք հղեց և շնորհավորեց ներկաներին՝ Հայրենիքի պաշտպանի օրվա առթիվ. «Մեծ հաղթանակները ձեռք են բերվում կյանքի և արյան գնով: Պետք չէ սգալ, պետք է հիշել նահատակներին ու շարունակել նրանց գործը»: Արեգ Խաչատրյանի ջութակի նվագի տակ երեխաները ասնունքով ու երգով սրտից բխած երախտագիտության խոսք ասացին՝ երգվելով գիտելիքներով ու կարողություններով ծառայել ազգին ու հայրենիքին, սրբությամբ պաշտպանել ազատ և անկախ Արցախը: Աշակերտների շուրթերով խոսում էր Արցախամոր

անհաղթ ու անկոտրում ոգին, հնչում մոր աղոթքը: Երկրորդիների կողմից հնչվեցված բանաստեղծությունների շարքը համալրվեց հայրենասիրական երգերով: Գրական-գեղարվեստական հանդեսը մեծ բավականություն և հուզմունք առաջացրեց միջոցառման մասնակիցների մեջ, առավել ևս, երբ լսեցինք Քննույց Սայրաբյանի կատարմամբ քանոնի նվագը: Ավաճածի հավելեց, որ արիության դասը կայացավ: Մեր նպատակն էր դաստիարակել առողջ մտածելակերպ ունեցող սերունդ, որը վաղ տեր կանգնի իր պատմությանը, շարունակի այսօրվա պահանջատիրությունը: Նման միջոցառումները նպաստում են մատաղ սերունդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Դա հայրենասիրության բաց դաս էր նաև ծնողների համար, քանզի նրանցից շատերը նույնպես առաջին անգամ էին լինում այս սուրբ վայրում: Պատմության, մշակույթի և հավերժության մի իսկական օջախ է այս թանգարանը: «Մենք հաղթանակած երկիր ենք, և մեր անենամեծ հավատարմությունը նահատակների ազատագրած հողը, երկիրը շենացնելն է: Պատերազմը մեզ պարտադրվել է: Ուժեղ լինենք, որ այլևս մահ ու ավեր չտեսնենք», - իր ելույթում ասաց ԼԴՀ զոհված ազատամարտիկների հարգատանջի միության նախագահ Գայյա Առաստանյանը և նվերներ բաժանեց միջոցառման մասնակիցներին ու կազմակերպիչներին: Միջոցառումը բարձր գնահատեցին կրթության բաժնի վարիչ Կ. Մարգարյանը և հ. 7 դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանը: Նման միջոցառումներ անցկացնելը ավանդույթ է դարձել: Հուշաթանգարանը մի վայր է, որտեղից դուրս են գալիս մաքրված ու սրբացած:

Անահիպ ՄԵՍՐՈՊՅԱՆ Ստեփանակերտի ՄՊՍԿ մեթոդիստ

ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՄԵՐ ԶԵՌՔԵՐՈՒՄ Է

Արիության դաս՝ նվիրված Մեծն Սպարապետ, ՀՀ ազգային հերոս, Արցախի հերոս Վազգեն Սարգսյանի ծննդյան 54-րդ տարեդարձին



Քաջաթաղի շրջանի Տիգրանավանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում սովորում է ընդամենը 34 աշակերտ՝ 7 համակարգ դասարաններով: 5-12-րդ բոլոր դասարաններն անվանակոչված են հերոսների անուններով՝ Աշոտ Դուլյան, Սոնթե Մելքոնյան, Քրիստափոր Իվանյան, Վազգեն Սարգսյան, Յուրա Պողոսյան: Դպրոցի տնօրենի ղեկավարությամբ զինդեկ Ռ. Պողոսյանը և դասուղեկներն անցկացնում են արիության դասեր՝ նվիրված նշյալ հերոսների ծննդյան օրերին: 2012թ. Վերջին զանգին Վազգեն Սարգսյանի անունը կրող՝ 12-րդ դասարանի շրջանավարտները հանդիսավոր կերպով 5-6-րդ համակարգ դասարանի աշակերտներին փոխանցեցին Սպարապետ Վ. Սարգսյանի անունը կրող դասարանը և կոչ արեցին բարձր պահել Սպարապետի անունը, մասնակցել դպրոցի բոլոր ռազմահայրենասիրական միջոցառումներին: Մի և մեկ արիության դաս, որը կազմակերպվել էին զինդեկ Ռ. Պողոսյանը, 5-6-րդ դասարանի դասուղեկ Ս. Մարտիրոսյանը: 5-6-րդ դասարանի աշակերտներ Գոռ Կնյազյանը, Իլյուշա Հովակիմյանը, Էդգար Աբրահամյանը, Լուսինե Հարությունյանն առաջին անգամ էին մասնակցում արիության դասին: Նշյալ կաթինետը ձևավորված էր Սպարապետի նկարներով, պատի թերթով: Աշակերտներին աջակցում էին 9-րդ դասարանից: Դպրոցի զինդեկի հրամանով ներս են բերվում ՀՀ և ԼՂՀ պետական դրոշմերը, կատարվում են օրհներգեր: Հայտարարվում է լուծյան րոպե՝ ի հիշատակ Արցախյան զոհաբերած զոհված բոլոր ազատամարտիկների: Մեծն Սպարապետն այնպիսի վառ անհատականություն էր, որը կարճ ապրելով, կարողացավ անել անհ-

մարիսն ու անմահանալ: Աշակերտուհի Ս. Ավագյանն իր խոսքում նշեց. «Այո, երկնեց մայր հողը և լույս աշխարհի բերեց իր Վազգեն որդուն: Մեր հերոսն աշխարհ եկավ, որպեսզի վերստին պատգամի դարերից եկած, դարեր գնացող հայ գոյի չարենցյան հորդորը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքակալ ուժի մեջ է»: Իսկ Լ. Հարությունյանը և Ի. Հովակիմյանը հերթականությամբ ներկայացնում էին հերոսի կենսագրությունն ու գործունեությունը: Խոսքերին զուգահեռ՝ էկրանին ցուցադրվում էր Սպարապետ Վազգենի մասին ֆիլմը: Գոռ Կնյազյանը շարունակում է. «Որքա՞ն հույզեր և ապրումներ էին ալեկոծվում բոցաշունչ զավակի կրծքում, երբ խոսքը վերաբերում էր դարաբաշտ խնդրին: Նա կարծես հզորանում էր, աչքերում հուրհրում էր Գոյապաքարի ոգին՝ մարտատենչ և պատկառագրու»: Աշակերտները հպարտությամբ կատարեցին Սպարապետի մասին երգը, որին հաջորդեցին բանաստեղծությունները: Ծափողոցներից մերքո հնչեցին ռազմահայրենասիրական երգեր: Վազգեն Սարգսյանը զոհվեց հանուն վեհ գաղափարների: Գաղափարներ, որոնց կիզակետում ազգի, հայրենիքի, հարազատ ժողովրդի փրկությունն է: Հենց այդ ճանապարհին էլ նա զոհվեց դավադիր գնդակից: Նրան հետմահու շնորհվեց ՀՀ Ազգային հերոսի կոչում, որը լրացրեց այն պարգևների շարքը, որ ստացել էր իր ազգի ակախության համար պայքարի ընթացքում: Արիության դասն ավարտվեց ավանդույթ դարձած Պետո հրամանատարի երգով: Իր ելույթում դպրոցի զինդեկ, պահեստազորի փոխգնդապետ Ռ. Պողոսյանը շնորհակալություն հայտնեց աշակերտներին և դասուղեկ Ս. Մարտիրոսյանին՝ արիության դասը պատշաճ կերպով կազմակերպելու և անցկացնելու համար: Դպրոցի տնօրեն է. Միրզոյանը մատնանշեց մանկավարժական կոլեկտիվի մեծ դերը մատաղ սերունդի ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում: Դպրոցի զինդեկին հանձնեց պատվոգիր՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից՝ մատաղ սերունդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ակտիվ մասնակցության համար: Հաջորդ Արիության դասը՝ նվիրված Յուրա Պողոսյանին, անցկացվելու է Ստեփանակերտ քաղաքում՝ նրա անունը կրող գործաստուն:

Հ. ՀՈՎԱՏԹՅԱՆ Տիգրանավանի Պ. Ղևոնդյանի անվան միջն. դպրոցի պատմության ուսուցիչ

ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՂ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐ
ՀՈՒՍԱՆԲ ՈՒ ՀԱՎԱՏԱՆԲ



մանքների, կյանքի վերջին օրերի, դառն ու դաժան ճակատագրի, օրագրի, տուն-թանգարանի մասին, նաև՝ հատվածներ, առանձին կտորներ՝ նրա ստեղծագործություններից, տողեր, պարբերություններ իմաստուն մտքերից:

Մի խոսքով՝ Չարենցին բնութագրող մի ողջ աշխարհ, նրան սիրելի, տեսանելի, հասկանալի, մեծարելի դարձնող նյութերի անվերջ մի շարան, յուրահատուկ մատենադարան:

Մարդ պարզապես զարմանում է. ի՞նչն է ստիպել նրան՝ այս բոլորը հավաքել, համակարգել, ամբողջական տեսքի բերել ու գրքի ձևով հրատարակել: Իսկ ընտրված հատվածներն այնքան հետաքրքիր են, որ ընթերցողն ուղղակի տարվում, գրքից կտրվել չի կարողանում, ուզում է կարդալ, կարդալ մինչև վերջ: Այսպես է: Վերցրեք, խմորե՛ք, գիրքը (եթև ունեք, իհարկե), ացքի անցկացրե՛ք վերնագրերը («Եղիշե Չարենց, անվան ստուգաբանությունը», «Արիստոտելի Չարենց, խոսքի խորոհ սրտի», «Գավիթ Գասպարյան. Չարենցի վերջին օրերը», «Գուրգեն Մահարու հուշերը», «Գևորգ Եմինի հուշերը», «Չարենցի ընտանիքը», «Հարություն Մկրտչյան. Եղիշե Չարենցի ձեռքակալությունը և եղերական մանր», «Կարինե Քոթանջյանի հուշերը», ...): Մի պահ խորհե՛ք ու կարդացե՛ք 5-րդ էջում գետնդրված այս տողերը, որ վերջավոր են Ռ. Չարենցի հուշերից:

«Մի օր Արևոյանի անհետանալու մասին խոսք բացվեց:

- Ի՞նչ են ուզում են մարդիկ, չեն հասկանում: Ի՞նչ են ընկել, թե պիտի պարզե՞նք՝ որտեղ է բաղված: Այսպես ավելի լավ չէ՞, խորհրդավորությունը ծածկում, անհայտության մեջ է թողնում ամեն ինչ: Ասենք՝ հանկարծ պարզվեց, թե խմորի հողի վրա սպանել են ու մի ծառի տակ էլ թաղել: Հետո ի՞նչ օգուտ: Չէ, ես անհայտություն

ը գերադասում եմ: Դրա մեջ ռոմանտիկա կա: Տրտնջում եմ, թե՛ չգիտեմ որտեղ է թաղված: Արևոյանն այնքան մեծ է, որ գուցե ավելի լավ է, որ գերեզման չունի. նա ամեն տեղ է, ամեն հայի սրտում: Չկարծե՛ս, թե գեղուններ են անում: Ես էլ չէի ուզեմ գերեզման ունենալ: Չգիտեմ՝ երբեք կհասնե՞մ այդպիսի մեծության, որ դրա արժանի լինեմ, բայց կուզեմայի, որ մարդիկ չիմանային, թե ուր եմ թաղված»:

Զգացի՞ք, թե ձգողական ինչպիսի մեծ ուժ ունի «Մուտքը»:

Գրքում կան ուշագրավ բազում տվյալներ, տեղեկություններ, որոնք, կարծում եմ, կարող են նորություն լինել մեր շատ ուսուցիչների համար:

Գոհունակությամբ նշենք, որ գիրքը թեև հասցեագրված է հիմնականում ուսուցիչներին, սակայն օգտակար կարող է լինել նաև գիտության, արվեստի ոլորտի աշխատողների, բարձր դասարանցիների համար:

Այո, առաջին հերթին այն մեծ չափով կօգնի ուսուցիչին, առիթ կտա վերջինիս՝ խորհելու, մտածելու, մեկ անգամ ևս թերթելու, կարդալու, հստակ պատկերացում կազմելու Հայաստանի վատասկավոր նկարիչ, ճանաչված արվեստագետ Ռեզինա Ղազարյանի մասին, որը Չարենցի մտերիմներից է եղել և այն ահավոր օրերին փրկել է նրա սուրբ մասունքները, թանկ ու անզնահատելի 12 հազար տողերը:

Ու դեռ ինչքան է բան կիմանա, երբ ուշի ուշով կարող եմ բավականին ծավալուն այն հարցազրույցը, որ պոետի դասեր՝ Անահիտ Չարենցի հետ վարել է հենց ինքը՝ Անուշ Սարունյանը, սովորական մի հայուհի, կրթական գործիչ, մտերիմ ուսուցիչ, որ անընդհատ որոնումների, պրպտումների մեջ է և անբուռ գիշերներ է լուսացնում տարիների վաղեմություն ունեցող ամսագրերից, ժուռնալներից, գրական մանուկից անհրաժեշտ տվյալներ ու նյութեր քաղելու համար: Ի դեպ, հարցերից մեկին՝ «Այսօր արցախցին հասկանում է ոչ միայն Չարենց, այլև սիրուն և ընդունում է նրան: Ինչ եք կարծում՝ ինչո՞ւ», գրուցակիցը պատասխանել է.

«Արիստոտելի Չարենց՝ դուստր Եղիշե Չարենցի», «Չարենցի երկրային տեղերը», «Չարենցը և արդիականությունը» և այլն) տակ գետնդրված սրտամոտ խորհրդածությունները, մտորումները, բա մեր մեծերի՝ Ավետիք Իսահակյանի, Ստեփան Չորյայի, Հակոբ Կոջոյանի, Վահրամ Ալազանի, Գևորգ Եմինի, Գառնիկ Անանյանի, մյուսների սրտառուչ հուշերը, պոետի միջավայրում բանաստեղծությունները, հետաքրքիր փաստերը: Ահա գեղեցիկ մի նմուշ այդ փաստերից:

«Չարենցի և Իսահակյանի առաջին հանդիպումը: Մի անգամ, երբ Իսահակյանը Կարսում գտնվում էր հյուրանոցի բակում, պատանի Եղիշեն տեսնում է նրան և կատարվածի պես հիացած նայում: Վարպետին դուր չի գալիս այդ սևեռուն հայացքը, և նա մի ուժգին ապոստակ է հասցնում Չարենցին: 1925թ. Չարենցը Վենետիկում հանդիպում է Իսահակյանին և մտերմիկ գրույցի ժամանակ հիշեցնում է միջադեպը: Վարպետը ծիծաղելով պատասխանում է.

- Դե, ոչինչ, Եղիշե ջան, դա ուսուսուսիլն է եղել: Ապուսակ ուժգին է եղել, դրա համար էլ լավ բանաստեղծ ես դարձել: Կարելի է շարունակել, գրքի մասին գովեստի, դրվատանքի շատ խոսքեր ասել, բայց ամեն ինչ չափի մեջ է պարզելու համար: Ի դեպ, հարցերից մեկին՝ «Այսօր արցախցին հասկանում է ոչ միայն Չարենց, այլև սիրուն և ընդունում է նրան: Ինչ եք կարծում՝ ինչո՞ւ», գրուցակիցը պատասխանել է.

- Ինչպես եք ուսուցանում երգը, հետաքրքրվում եք:

ԱՐԾԵ, ԹՈՂ ԱՍԵՆ

Երաժշտությունը մարդկային հոգու արտահայտությունն է:

Պատանի այս միտքն ամեն պատեհ առիթով սիրում է հիշել ու հիշեցնել Կարինեն ու անմիջապես հավելել.

- Կյանքը, աշխարհը ես առանց երգի, առանց երաժշտության չեմ պատկերացնում: Այլ կերպ ասած՝ ապրելու իմաստն ինչ-որ տեղ, ինչ-որ չափով երգ-երաժշտության մեջ են տեսնում:

Իրոք, այսպես է: Կարինեի համար երգն ամեն ինչ է: Քանի՞ տարի է՝ դասարան է մտնում ու երգ ուսուցանում: Եվ գիտե՞ք ինչ եռանդով, ինչպիսի ոգևորությամբ... Թերևս սրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ երեխաները միշտ էլ անհամբեր են նպաստում նրան:

Հրաշալի ծայն ունի և ջանում է, որ սաները նմանվեն իրեն: Ու դա հաջողվում է:

Մտեք, խմորե՛ք, մեր՝ Մեծ Թաղերի մարշալ Իսանկեռյանցի (Խուռապետ) անվան դպրոցի 4-րդ, 5-րդ, 7-րդ դասարանները, ունենդրեք երգ-երաժշտության ժանր և կհանդգվեք, որ փոքրերից շատ-շատերը (Լիլիթ Միրզախանյան, Ալիսա Բրուտյան, Այրոն Սարգսյան, Մարիանա Լալայան, Լիլիթ Բեջանյան, Հասմիկ Իսանկեռյան, Սոֆի Մարգարյան, Աննա Ալթունյան, ուրիշներ) օժտված են երգելու նախանձելի շնորհքով և իրենց դուրեկան ձայնով գերում ու հմայում են ոչ միայն համադասարանցիներին, այլև բոլորին: Սրանում մենք նորից ու նորից համոզվեցինք, երբ մերկա եղանք 5-րդ «ա»-ում կազմակերպված յուրօրինակ բաց դասին, որն անցավ աշխույժ, տոնակալ մթնոլորտում: Ինչպես միշտ, դասն սկսվեց ԼՂԻ օրհներգի կատարմամբ: Ապա բոլորը միասին (16 աշակերտ ունի դասարանը) գեղեցիկ երգեցին Սայաթ-Նովայի «Քամանջան», Իսահակյանի «Բինգյուլը», «Ընկերը», «Մանուշակը», «Ամառի տակիցը»: Նշենք, որ ուսուցչուհին երբեմն օրագրից շեղվում և առավել մեծ կարևորություն է տալիս ժողովրդական, գուսանական, աշուղական, հայրենասիրական երգերին: Դա նկատելի էր նաև այս ժամին:

Դասաժամի երկրորդ կեսը նվիրված էր նոր երգի՝ «Ստեփանակերտի» ուսուցմանը: Բոլորս հիացել ու քարացել էինք: Իսկ մեծ ու լուսավոր դասարանում բնածուն էին երգի տողերը.

Իմ լեռների անգին քարն ես... Անուշ, հմայիչ ձայնով երգում էր ուսուցչուհին, ու դասարանը կամայք ձայնակցում էր նրան: Եվ ամեն ինչ լավ էր ստացվում: Ու սա՛ ոչ միայն այս ժամին:

- Կարինեն ասես ծնվել է երգելու, իր հմայիչ ձայնով մեծերին ու փոքրերին գերելու համար, - գանգից հետո քննարկման ժամանակ իր կարծիքը հայտնելով՝ ասաց տնօրեն Բիդեստա Դանիելյանը: - Ես երգի ժամեր եմ լսել նաև 4-րդ ու 7-րդ դասարաններում և միշտ հաճելի տպավորություն ստացել, ուրախացել, որ մեր երեխաների գեղագիտական դաստիարակությանը երգ-երաժշտության դասերին շատ ավելի մեծ ուշադրություն է դարձվում: Սա գալիս է ուսուցչուհուց: Ինձ թվում է՝ մեծ պատիվ է մեզ համար, որ նրա կատարողական արվեստի մասին գովեստով են խոսում նաև շրջանում: Այ, տեսե՛ք ինչ է գրում շրջանային թերթը՝ «Դիզակը». «ԼՂՀ հռչակման 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում մայիսի 18-ին Հայրորթի մշակույթի տանը անցկացվեց մանկապատանեկան երգաչափերի մրցույթ-փառատոնի շրջանային փուլը: Երաժիշտ մասնագետներից կազմված հանձնախումբն առանձնապես նշեց Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի խմբավար Կարինե Չարենցյանի լավ աշխատանքը»:

Սրանք հենց այնպես գրված բառեր չեն: Այս բառերի հետևում մենք պիտի տեսնե՞ք եռանդ ու նվիրվածություն, ծիրք ու շնորհք, սեր ու կարոտ երաժշտության հանդեպ:

Դասի մասին հիացունքի իրենց խոսքն ասացին նաև ուսուցչուհիներ Իրա Լալայանը, Սվետա Դանիելյանը:

Իսկ երեխաների՝ Ալիսայի, Այրոնայի, Լիլիթի, Մարիանայի և մյուսների գոհունակություն արտահայտող հայացքները, ժպտացող աչքերը լուռ ու անխոս մի բան էին ասում՝ մենք սիրում ենք ընկեր Չարենցյանին, մենք սիրում

ենք երգ-երաժշտությունը:

Արժե, թող ասենք, քանզի նրա համեստ ա վ ա ն դ ը երևում է ոչ միայն կրթօջախում, այլև գյուղական ավանում բուն, շրջանում, համար պետությունում անցկացվող երգի մրցույթ-փառատոներում:

Այսպիսին է Կարինե Չարենցյանը, որը թեև երաժշտական կրթություն չունի (Արցախի պետական համալսարանի մաթեմատիկայի բաժին է ավարտել 1984-ին), բայց մեծ սիրով ու ավանդով երգի ժամերն էլ է տանում, քանզի երգելու բնատուր շնորհք ունի, ի վերուստ տրված հիանալի շնորհք:

- Լավ հիշում եմ, - ասում է, - մանկապարտեզում «Հավիկ» էի երգում ու երբ վերջացնում էի, ուսուցչուհին և երեխաներն ուրախ ծափափում էին:

Հետո հասկանալի է, ուրիշ երգեր են սովորել ու, որ կարևորն է, երգն ավելի են սիրել:

Ավելի ուշ, երբ արդեն հասակ են առել, կրթություն ստացել ու դասարան մտել, համոզվել են, որ երգն, արդարև, մարդու ուղեկիցն է անձնուրեք. թե ուրախությամբ, թե տխրության պահերին: Ես այն մտքին եմ, որ երգը հասկանալի ու սիրելի ինքնին մեծ երջանկություն է: Բայց այդ դեռ չի նշանակում, թե բոլորն անխտիր պետք է երգիչներ ու երաժշտագետներ դառնան: Խոսքը գեղագիտական ճաշակի մասին է, գեղեցիկը ճիշտ հասկանալու, ճիշտ ընկալելու մասին: Հայ ժողովրդի պատմությունից մեզ հայտնի է, թե մեր նախնիներն ինչ կրթությամբ են սիրել, սովորել ու սովորեցրել

հայրենի երգը: Ու վստահաբար կարելի է ասել, որ այս մշակույթի պահպանման համար մենք պարտական ենք ոչ միայն մեսրոպյան գրերին, այլև մեր հիմնավոր երգերին ու երաժշտությանը: Կոմիտասի դերը մեր ժողովրդի կյանքում աննկարագրելի է նրա համար, որ բացի ազգային երգեր հավաքելուց ու մշակելուց, նա դրանք տարածում էր ժողովրդական գանգվածների լայն շրջաններում:

- Ինչպե՞ս եք ուսուցանում երգը, - հետաքրքրվում ենք:

- Դա բավականին բարդ գործընթաց է, ու մեկ-երկու նախադասությամբ ասել, բացատրել չի լինի: Մի բան կասե՛մ միայն. տարբեր մեթոդներով ակտիվացնում են երեխաներին, նրանց մեջ առջեք բերում հետաքրքրություն, ուշադրություն դեպի երգը և այն կատարելու ցանկություն: Միշտ հիշեցնում եմ, որ երգի հաջող կատարմանը մեծապես նպաստում է բառերի պարզ արտասանությունը: Տեքստն ուսուցանում են մեղերու հետ միասին, որպեսզի երեխաները երգից ամբողջապես տպավորություն ստանան: Ինչպես գիտեք, ես երգ-երաժշտության խմբակ էլ ունեմ, որում ընդգրկված բոլոր տասնութ անդամները երաժշտական լավ խորություն ունեն, բազմաձայն երգի արվեստը զգալու, յուրացնելու ունակություն:

Առանց մի փոքր անգամ երկմտելու կարող եմ ասել, որ երգաչափի պարապմունքները (շաբաթը երկու օր, երկու ժամ) զգալիորեն նպաստում են սովորողների վարքագծի ձևավորմանը, ընդունակությունների և կարողությունների դրսևորմանը:

Ասում, հավաստում է շնորհալի ուսուցչուհին, իսկ ևս գլխով հավանության նշան են անում, վերհիշում նրա տված դասերը, երգի քաղցր, անկրկնելի էլեմենտները ու ակամայից մտաբերում գերմանացի ականավոր կոմպոզիտորի բառերը. «Երաժշտությունը առավել բարձր հայտնություն է, քան իմաստությունն ու փիլիսոփայությունը»:

Էջո՝ Միքայել ԲԱՆԱՆԻ 20-րդ դարի Արցախի կավագույն մանկավարժ

ԴԻՍՈՐԴ-2013

ԼԵՆՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » մարտի 2013 թ.

թ. Ստեփանակերտ

N 112 - Ն

ԼԵՆՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԻՍԻՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013-2014 ՌԻՍԻՄԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՄԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՌԻՍՆԱՂԱՎԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՌԻՍՆԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՆԻՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԻՍԻՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍՆԱՆ ՎԱՐՉԻ ՍԱՍՆԱԿԻ ԶԵՎՈՎ ԿԻՐԱՄԱՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՌԻՍԻՑՄԱՍԲ ՏԵՂԵՐԸ ԵՎ ԴԵՌԱԿԱ ՌԻՍԻՑՄԱՍԲ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- «Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան` Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության կառավարությունը ո ռ ո շ ու մ է`
1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա ընդունելության` ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպատակների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ տեղերը և հետակա ուսուցմամբ վճարովի տեղերը` համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները` համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության կրթության և գիտության նախարարության հետ:
3. Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպատակ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N 81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:
4. Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա անվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպատակների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) 10 տոկոսը (առնվազն 1 տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զրաացրված քաղաքացիներին:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության կրթության և գիտության նախարարությանը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՆՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի շրջանային կառավարության կառավարության
« 12 » մարտի 2013 թվականի
N 112 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԵՆՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԻՍԻՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013-2014 ՌԻՍԻՄԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՄԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՌԻՍՆԱՂԱՎԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՌԻՍՆԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՆԻՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԻՍԻՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍՆԱՆ ՎԱՐՉԻ ՍԱՍՆԱԿԻ ԶԵՎՈՎ ԿԻՐԱՄԱՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՌԻՍԻՑՄԱՍԲ ՏԵՂԵՐԻ ԵՎ ԴԵՌԱԿԱ ՌԻՍԻՑՄԱՍԲ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ ԱՐՑՆԱԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՆԱՍՐԱՆՆ

1.1 ԲԱԿԱՆԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐ (ԱՌԿԱ ՌԻՍԻՑՈՒՄ)

Table with 4 columns: Շաժ կաժիժը, Ասանաժիտության սանժանոժը, Պետության կողմից ուսանողական նպատակների ձևով ուսման վարձի վերհատուցմամբ (անվճար) տեղերը, Բուժիկողմից ուսման վարձի մասնակի գեղջի կրթաման (վճարովի) տեղերը

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՍԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՍՆԱՃՅՈՒՐ

2.1 ԲԱԿԱՆԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐ (ԱՌԿԱ ՌԻՍԻՑՈՒՄ)

Table with 4 columns: Շաժ կաժիժը, Ասանաժիտության սանժանոժը, Պետության կողմից ուսանողական նպատակների ձևով վերհատուցմամբ (անվճար) տեղերը, Բուժիկողմից ուսման վարձի մասնակի գեղջի կրթաման (վճարովի) տեղերը

2.2 ԲԱԿԱՆԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐ (ԴԵՌԱԿԱ ՌԻՍԻՑՈՒՄ)

Table with 3 columns: Շաժ կաժիժը, Ասանաժիտության սանժանոժը, Բուժիկողմից ուսման վարձի մասնակի գեղջի կրթաման (վճարովի) տեղերը

1.2 ԲԱԿԱՆԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐ (ԴԵՌԱԿԱ ՌԻՍԻՑՈՒՄ)

Table with 3 columns: Շաժ կաժիժը, Ասանաժիտության սանժանոժը, Բուժիկողմից ուսման վարձի մասնակի գեղջի կրթաման (վճարովի) տեղերը

ԴԻՍՈՐԴ - 2013

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Table with 6 columns: Շաժիք գիր, Առաճախությունների անվանումը, Պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի անվանումը, Բյուջեի կողմից ֆինանսավորվող ծրագրերի անվանումը (վճարում), Իրականացվող կրթություն, Գնահատվող կրթություն:

2.4 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՉԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Table with 3 columns: Շաժիք գիր, Առաճախությունների անվանումը, Կենտրոնի ուսուցանման տեղեկը (միջնակարգ կրթություն):

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

« 12 » մարտի 2013 թ.

N 115 - Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՏԱԿԱՑՎԵԼԻՔ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՈՒՅԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻ ԿԻՐՈՒՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Յանապետության օրենքի 13-րդ հոդվածին և Լեռնային Ղարաբաղի Յանապետության կառավարության 2013 թվականի հունվարի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Յանապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների օրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 19-Ն որոշման հավելվածի 43-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Յանապետության կառավարությունը որոշում է՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացվելիք 2013-2014 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավորի կրթական օրագրով տեղերի ցանկին՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Յանապետության կառավարության
« 12 » մարտի 2013 թվականի
N 115 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՏԱԿԱՑՎԱԾ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ՓՈՈՒՅԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻ ԿԻՐՈՒՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ

Table with 4 columns: Շաժիքի ծավալ, Բյուջեի մասնագիտություն, Բյուջեի կողմից ֆինանսավորվող կրթություն, Գնահատվող կրթություն:

Table with 4 columns: Շաժիքի ծավալ, Բյուջեի մասնագիտություն, Բյուջեի կողմից ֆինանսավորվող կրթություն, Գնահատվող կրթություն:

Table with 4 columns: Շաժիքի ծավալ, Բյուջեի մասնագիտություն, Բյուջեի կողմից ֆինանսավորվող կրթություն, Գնահատվող կրթություն:

Table with 4 columns: Շաժիքի ծավալ, Բյուջեի մասնագիտություն, Բյուջեի կողմից ֆինանսավորվող կրթություն, Գնահատվող կրթություն:

Table with 4 columns: Շաժիքի ծավալ, Բյուջեի մասնագիտություն, Բյուջեի կողմից ֆինանսավորվող կրթություն, Գնահատվող կրթություն:

ԴԻՍՈՐԴ - 2013

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒՄ

Table with 4 columns: N, Ծածկագրեր, Ամանագրության անվանումը, Անվանումը, Դասակարգումը. Rows include 190300, 310102, 310302, 311101.

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » մարտի 2013 թ.

N 113 - Ն

Ք. Ստեփանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԴԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՏԵՂԵՐԸ ԵՎ ԴԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխառուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցմամբ տեղերը և հեռակա ուսուցմամբ վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ:

3. Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումը իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության « 12 » մարտի 2013 թվականի N 113 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԴԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂԻՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՏԵՂԵՐԻ ԵՎ ԴԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

1. ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒԵԶ

Table with 6 columns: Ծածկագրեր, Ամանագրության անվանումը, Պետության կողմից ուսմանը համարվող ընդհանուր փոխառուցման (անվճար) տեղերը, Իրական կրթության, Օրգանակարգ կրթության, Գնահատական կրթության, Օրգանակարգ կրթության. Rows include 0402, 0405, 0406, 0418.

2. ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԵԶ

Table with 4 columns: Ծածկագրեր, Ամանագրության անվանումը, Պետության կողմից ուսմանը համարվող ընդհանուր փոխառուցման (անվճար) տեղերը, Բյուջայի կողմից ուսման փոխառուցման (վճարովի) տեղերը. Rows include 0501, 0502, 0503, 0504, 0505.

3. ՇՈՒՇԻԻ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԵԶ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Table with 4 columns: Ծածկագրեր, Ամանագրության անվանումը, Պետության կողմից ուսմանը համարվող ընդհանուր փոխառուցման (անվճար) տեղերը, Բյուջայի կողմից ուսման փոխառուցման (վճարովի) տեղերը. Rows include 0312, 0507, 0514, 0515, 0518, 2014, 2307.

4. ՇՈՒՇԻԻ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԵԶ (ԴԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Table with 3 columns: Ծածկագրեր, Ամանագրության անվանումը, Վճարովի ուսուցման տեղերը (միջնակարգ կրթության). Rows include 0312, 0517.

5. ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐԿԵՍԻ ՔՈՒԵԶ

Table with 3 columns: Ծածկագրեր, Ամանագրության անվանումը, Անվճար ուսուցման տեղերը. Row includes 0506.

ԴԻՄՈՐԴ - 2013

6. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՅԵՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՄՈՒՄԱՐԱՆ

Table with 5 columns: Ծածկագրեր (IDs), Առաջադրության անվանումը (Task Name), Անկարգ ստեղծող (Creator), Կեղևի ստեղծող (Developer), and counts for Իրեն (Self) and Գլխավոր (Head) for both creator and developer.

7. ՄԱՐՏՈՒՆԻ ԱՐՅԵՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՄՈՒՄԱՐԱՆ

Table with 4 columns: Ծածկագրեր (IDs), Առաջադրության անվանումը (Task Name), Անկարգ ստեղծող (Creator), and Կեղևի ստեղծող (Developer).

ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՍԱԲԺՇԿԱԿԱՆ ԽԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Ա Ր Գ Մ Ի Ի պետական համալսարանի այս տարվա մասնագիտությունների ցանկում ավելացել է նոր, գրավիչ անունով մասնագիտություն՝ կենսաբժշկական ճարտարագիտություն:

Ռարոն Ալեքսանյան, ինչու՞ կենսաբժշկական ճարտարագիտություն: Ի՞նչն է դրդել Ձեզ ձեռնամուխ լինելու ըստ էության միջառարկայական ուսուցողական ծրագրի ներմուծմանը:

Ռարոն Ալեքսանյան, ինչու՞ կենսաբժշկական ճարտարագիտություն: Ի՞նչն է դրդել Ձեզ ձեռնամուխ լինելու ըստ էության միջառարկայական ուսուցողական ծրագրի ներմուծմանը:

տասն անգամ գերազանցում է առկա մասնագետների քանակը, և դա այն դեպքում, երբ արդեն շուրջ 20 տարի է, ինչ դաշնային կարգավիճակ ունեցող համալսարաններում բացվել են համապատասխան բաժիններ: Սպասվում է, որ սարքավորումների արդիականացումից հետո այդ թիվը կաճի մինչև 30 անգամ: Մենք թևակոխել ենք մի այնպիսի դարաշրջան, երբ զարգացումը կրում է արագընթաց բնույթ: Գնալու է ճարտարագիտության ոլորտը կարծատիպերն ընդունակ չեն ընկալելու նոր և հաճախ անսպասելի գաղափարները: Օրինակ՝ դա պարզ դարձավ տեղեկատվական տեխնոլոգիաների պարագայում: Ժամանակն է գիտակցելու այդ իրողությունը նաև մարդու մասին գիտությունների ոլորտում: Այնպես է, որ բժշկական համակարգը զարգանում է շնորհիվ տեխնոլոգիաների: Ստեփանակերտում կառուցվում է նոր, ժամանակակից պայմաններով հիվանդանոց, որտեղ հարկավոր են ոչ միայն բժիշկներ, այլև տեխնոլոգիաները, սարքավորումներն սպասարկող մասնագետներ: Խնդիրը միայն համապատասխան բժշկի առկայությունը չէ, այլև նոր տեխնոլոգիաներից օգտվել կարողանալը: Բժշկի հետ, նրան զուգահեռ պետք է աշխատի մասնագետ, որն սպասարկի սարքավորումները և դրանցից ստացված ինֆորմացիան փոխանցի բժշկին: Իսկ դա կօգնի նրան ճիշտ օգտագործելու և ճիշտ բուժում իրականացնելու: Ավելի կոնկրետ ներկայացրեք, խնդրեմ, մասնագիտական գործունեության բննարկվող ոլորտը: Կենսաբժշկական ճարտարագիտությունը ընդգրկում է գիտական գիտելիքների և տեխ-

նիկայի մի այնպիսի ոլորտ, որը պարունակում է մարդկային գործունեության միջոցների, մեթոդների ու եղանակների համախմբություն՝ ուղղված հետևյալ խնդիրների լուծմանը: - մասնակցություն օգտագործող հետազոտությունների և բուժական գործընթացների կազմակերպմանն ու անցկացմանը՝ օգտագործելով գործիքային և սարքավորումաճարային միջոցները: - տիպային բժշկական սարքավորումների, ապարատների, համակարգերի և համալիրների, ինչպես նաև բժշկական լաբորատորիաների տեխնիկական միջոցների շահագործում: - կենսաբժշկական տեղեկատվության մշակում, բժշկական տվյալների հենքերի ստեղծում ու շահագործում, օգտագործման և բուժական գործընթացների տեղեկատվական աջակցման ծրագրերի ժամանակակից փաթեթների օգտագործում: - Իսկ ինչու՞ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, ավելի կոնկրետ՝ ֆիզիկայի ամբիոնի հենքի վրա է որոշվել կազմակերպել կենսաբժշկական ճարտարագիտության մասնագետների պատրաստումը: - Գաղտնիք չէ, որ դարեր շարունակ բժիշկների մեծամասնության համար բժշկությունը հեռու էր կանգնած ճշգրիտ գիտություններից և զարգացել է իր ներքին տրամաբանությամբ: Լայնորեն ընդունվածից տարբերվող՝ տրամաբանական կապերի առկայությունը բժշկությունը դարձրել է մի արվեստ, որին տիրապետելն անհնար էր առանց բուժման արհեստի լիակատար իմացության: Դարկ է, սակայն, նշել, որ բժիշկների մի մասն աշխատում էր և կատարել է խոշոր հայտնագործություններ նաև ճշգրիտ գիտությունների ոլորտում: Այսպես, միլանցի բժիշկ Դ. Կարդանոն դարձավ խորանարդ հավասարումների լուծման, ինչպես նաև կարդանային փոխանցման հեղինակ: Մեկ այլ բժիշկ՝ Ժ. Պուլսեյը, լուծեց զանազան խոշորակշիռ մատուցիկ հեղուկի հոսքի հայտնի խնդիրը: Ջերմադինամիկայի 1-ին սկզբունքի հայտնագործության հեղինակ դարձավ նաև Կարդանոն բժիշկ Յու. Մայերը, իսկ Գ. Յելմիոլցին մենթ պարտական ենք ջերմադինամիկական պոտենցիալների ներմուծման, արյան ճնշման չափման մեթոդների հայտնագործության և շատ այլ աշխատանքների համար: - Ի՞նչ կարող եք ասել ֆիզիկամաթեմատիկական կրթություն ունեցող գիտնականների՝ բժշկության մեջ ունեցած ներդրման մասին: - Մեզ քաջ ծանոթ են ճարտարագիտաֆիզիկական կրթություն ունեցող այն գիտնականների անունները, որոնք բժշկության մեջ առաջինն էին: Օրինակ՝ Կուրգան քաղաքի վնասվածքաբանության ինստիտուտի հիմնադիր, ակադեմիկոս Գ. Իլիգարովն ունեցել է հենքային ճարտարագիտական կրթություն, աչքի միկրոփիրաբուժության միջոցառումներ կենտրոնի հիմնադիր, ակադեմիկոս Ս. Ֆյոդորովն ունեցել ենք բժշկական ֆիզիկամաթեմատիկական կրթություն, սրտաբան-վիրաբույժ, ակադեմիկոս Ն. Անոսովն ավարտել է ինդուստրիալ ինստիտուտը: Որպեսզի ավելի լիարժեք բնութագրենք ֆիզիկոս գիտնականների ավանդական հետաքրքրությունը կենսաբանության և բժշկության հանդեպ, նշենք, օրինակ, նրանց մասնակցությունը դիվերտիկուլի արտադրության ստեղծման գործում, որոնք ծառայում են լաբորատորիային դեղի մարմնի այս կամ այն օրգան փոխանցելուն: - Ըստ այդմ, ի՞նչ խնդիրներ եք առաջադրում և ի՞նչ լուծումներ եք ակնկալում: - Ցանկացած սկզբունքորեն խոր մաթեմատիկական հանրաժեշտ է լուծել մի քանի խնդիրներ՝ առանց որևէ ուսույթական սպասումների ձևակերպել վերջնական խնդիրը, ելնելով առկա միջոցներից՝ որոշել նպատակին հասնելու ճանապարհներն ու եղանակները: Կենսաբանական նպատակներ և երկու կրթական դպրոցների միացումը և այնպիսի մասնագետների թողարկումը, որոնք ընդհանուր ֆիզիկամաթեմատիկական, ճարտարագիտական պատրաստությունից բացի, կտիրապետեն նաև հատուկ գիտելիքների, օրինակ՝ բժշկության մեջ տոմոգրաֆիայի մեթոդներին, լաբորատորիայի ճարտարագիտությանը: Այնպես է, որ ոչ մի բնույթ խնդիր միայնակ լուծել չի կարող, մասնավոր, նոր ուսումնական պլանի ներդրման փուլում: Այսպես, մտավոր ներուժի և նյութատեխնիկական իմաստով ՌԴ առավել հարուստ ազգային միջոցակազմի հետազոտական համալսարանը (ՄԻՓԻ) փորձուսուցման համար օգտվում է Բլոխի մի անվան ռուսալեզուական կենտրոնի, ինչպես նաև Բուռնազյանի անվան դաշնային բժշկական կենսաֆիզիկական կենտրոնի ծառայություններից: Մեր դեպքում, բարեբախտաբար, Ստեփանակերտում ավարտին է մոտենում բժշկական

կենտրոնի շինարարությունը, որն ապահովված կլինի բարձրտեխնոլոգիական բնույթի տեխնիկայով, և այդպիսի սարքավորումների վրա աշխատող մասնագետների պահանջարկը կտրուկ կաճի: - Եվ վերջապես, որտե՞ղ կարող են աշխատել այդ մասնագիտությամբ շրջանավարտները: - Նրանց համար աշխատանքի լայն ասպարեզ կա հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում, ֆիզիոթերապիական, բուժական-առողջարանային, տրենաժորային, վերականգնողական կենտրոններում, ֆիտոնես-ակումբներում և այլուր: - Խոստովանե՞ք, որ այսօր մեր ինժեներներն աշխատանքի մեծ ասպարեզ չունեն, ինչպես նախկինում, բացառությամբ էլեկտրաէներգետիկայի, հիդրոէներգետիկայի, համաքարոյունաբերության և էլի մի քանի ոլորտների: Փաստորեն այս նոր մասնագիտությամբ նրանց համար նոր ասպարեզ է բացվում: - Ես միշտ մտածել եմ՝ ինչպե՞ս մեր ուսանողներին բերել դեպի նոր տեխնոլոգիաներ: Եվ գտա մի ոլորտ՝ բժշկությունը: Մայրաքաղաքում նոր հիվանդանոց են կառուցում, որը կհագեցվի ժամանակակից սարքավորումներով: Անհրաժեշտ կլինեն դրանք սպասարկող մասնագետներ: Բացի այդ, մասնագիտությունն առնչվում է կենսամիջավայրին, ընդհանրապես, կենդանի միջավայրին (բիո): Իսկ դա նաև գյուղատնտեսության և կենսաբանության զարգացմանը: Օրինակ՝ լաբորատորիայի մեջ ազդեցությունը սերմերի աճի ընթացքի վրա: Այսինքն՝ մենք ուզում ենք պատրաստել մասնագետներ, որոնց պահանջարկն այս պահին կա: - Իսկ համալսարանն ու՞րի՞ համապատասխան ներուժ՝ նման մասնագետներ պատրաստելու համար: - Մենք հաշվել ենք, 80 տոկոսով ապահովված ենք մասնագետներով: Գործնական պարամունքներն անմիջապես կանցկացվեն բժշկական կենտրոնում, իսկ տեսական մասով մասնագետներ ունենք, քանզի ամբողջն էլեկտրոնիկա է և ֆիզիկա: - Շայտատանում կա՞ այդ մասնագիտությունը: - Պոլիտեխնիկում տալը տարի է, ինչ գործում է և մեծ պահանջարկ ունի: - Փաստորեն նորից գրավի՞չ է դառնում ինժեներական մասնագիտությունը՝ գործունեության նոր ասպարեզի բացումով: - Եթե մեր ազգը չունենար ընդհանուր ինժեներական պատրաստություն, Արցախյան պատերազմում դժվար կլիներ հաղթելը. չէրած տեղից մի բան էին սարքում, որը դառնում էր զենք: Առանց ռազմական կրթության ունենալու, մեր հրամանատարները կախյալային, հրետանային և այլ ասպարեզներում ճիշտ հաշվարկներ էին կատարում, որն օգնում էր հաղթանակներ կռել մարդկային և զինտեխնիկայի ավելի մեկզ միջոցներով: Դա որտեղից էր գալիս՝ մեր կրթականության, ինժեներական մտածողությունից: - Պարոն Ալեքսանյան, քանի առիթը կա, հարցնե՞մ նաև՝ ինչպե՞ս եք զննատանում ֆիզմաթ ֆակուլտետի ներկա մակարդակը: - Ուրախությամբ ասեմ, որ անցած տարի մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Ալեքսանդր Խաչատրյանը և ես պատրաստել ենք մաթեմատիկայի և ֆիզիկայի գծով գիտությունների երկու թեկնածուներ: Նոր եկած ուսանողներն էլ, չնայած 4 հոգի են, նույնպես լավ մակարդակ ունեն. գոհ եմ, բնական խելքով օժտված երիտասարդներ են, ուղղակի հաճույք են ստանում նրանց հետ աշխատելուց: Կարող եմ ասել՝ արցախյան տաղանդավոր գեներ վերածնվում է: Դասավանդումը կատարվում է ամենաժամանակակից մեթոդներով: Երկու գրատախտակ ունենք՝ էլեկտրոնային պրոյեկտորով և բացատրական: Դասախոսությունը կարդում ենք, ուսանողները միայն լսում են, հաղորդակցվում դասախոսների հետ (ընդհանրապես, նորմալ համալսարանում դասախոսություն չեն գրում, դա անախորհրդ է, այն մտցված է համակարգիչ): Մնում է լաբորատոր աշխատանքները դնենք բավարար հիմքերի վրա: Մի խոսքով, հեռանկարային մասնագիտություն է, և մեծ հույսեր ենք կապում երիտասարդ ուժերի հետ: Շնորհակալություն ԼԴՅ կրթության և գիտության նախարարությանը, որ ընդառաջելով մեր նախաձեռնությանը՝ նպաստել է, որպեսզի կառավարությունը որոշմամբ կենսաբժշկական ճարտարագիտությունը մտցվի Արցախի պետական համալսարան:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՇԱՐԺՈՒՄ - 25

ԿԱՆԱՅԵ ԱՐԾԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐՈՒՄ

Հայոց պատմության հերոսական էջերից է Արցախյան ազգային-ազատագրական շարժումը, որի տարեգրությունը հարուստ է հայ քաջորդիների և արիասիրտ դուստրերի սխրանքներով:

Դեռևս մեր ժողովրդի պատմության վաղ շրջանում ազգի գոյատևման ճակատագրական պայքարում կանայք մարտնչել են օտար զավթիչների դեմ՝ հանուն մեր երկրամասի ազատության, նրա գիր ու լեզվի, հավատքի ու պատմության: Այդ մասին արձանագրել են մեր պատմիչները իրենց գործերում՝ մագաղաթյա մատյաններում:

Արցախի աշխարհաքաղաքական դիրքը և գոյապահպանման խնդիրը կարևորել են կանանց դերը լեռնաշխարհի հերոսական պայքարում: Պատահական չէ, որ Արցախյան պատերազմին զինվորագրվել են բազմաթիվ կանայք, որոնք պատրաստ էին հայրենիքի, ազգի փրկության գոհասեղանին դնել իրենց կյանքը, և որոնցից յուրաքանչյուրը որպես մարտական պատգամ ուներ Ավարայրից ժառանգած՝ եղիշեի «Մահ իմացեալ անմահութիւն է» իմաստուն կարգախոսը:

Արցախի հերոսամարտերում առաջին վաշտի հրամանատար Աշոտ Դուլյանի (Բեկոր) կողքին մարտնչել է Արցախ աշխարհի արժանի դուստր, թատերական բեմահարթակը ռազմաճակատով փոխարինած՝ ռազմի դաշտում հրաշքներ գործող ժաննա Գալստյանը, որը դեռևս Արցախյան շարժման արշավույսին իր կոչերով հավատ ներշնչեց գալիք հաղթանակի նկատմամբ, իսկ Արցախյան պատերազմի ամբողջ ընթացքում անպարտելիության գրավականը համարելով միասնական պայքարը՝ զենքը երբեք ցած չդրեց:

Արցախյան գոյապայքարի ծանր տարիներին, երբ օրակարգում դրվեց զինված առճա-

կատման հարցը, Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի մի խումբ հայրենասերներ թշնամու ներխուժման վտանգից արցախյան հողը զերծ պահելու նպատակով ձեռնարկեցին պայթուցիկ նյութերի, ձեռքի նռնակների պատրաստման գործին: Այդ հայրենասերների շարքում իր համեստ ներդրումն է ունեցել լավագույն մասնագետ, հատկապես փորձնական զենքերի պատրաստման համար պայթուցիկ նյութերի բաղադրամասերին քաջատեսակ Անահիտ Եղիազարյանը: Նա Արցախյան շարժման մեջ էր մտել ամբողջ ընտանիքով՝ հարազատներով և մերձավորներով:

Կանայք կամավորագրվել են Արցախի ինքնապաշտպանության նորաստեղծ բանակին: 1992թ. սեպտեմբերին Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Արկարի Տեր-Թադևոսյանի օժանդակությամբ ստեղծվեց կանանց ջոկատ՝ Վարդուհի Գևորգյանի հրամանատարությամբ: Ջոկատի շարքերը համալրվեցին կապավոր, դիպուկահար, բուժքույր զինվոր աղջիկներով: Ջոկատն արիաքար մարտնչել է Մարտակերտի, Ասկերանի, Բերդաձորի, Շուշիի և այլ հերոսամարտերում: Բուժքույր Ջուլիա Չայրապետյանը համատեղ մարտերից զիտել լեռնաշխարհի քաջերին: Մարտակերտի հեռուստաաշտարակի մոտ տեղի ունեցած մարտերից մեկում, երբ թշնամին չէր ուզում զիջել ռազմավարական նշանակություն ունեցող բարձունքը և փորձում էր օդակի մեջ առնել հայ զինվորներին, իսկ հայ մարտիկները չէին նահանջում իրենց դիրքերից, փորձառու բուժքույրը կարողացել է ճակատի առաջնային գծից հանել զոհվածներին և վիրավորներին՝ լեռնաշխարհի քաջերին, որոնք թշնամու գերագանցող ուժերի դեմ հերոսաքար կռվել, հաղթել և զոհվել զիտեին: Փորձառու

բուժքույրը «Փրկարար Ջուլիա» անունն էր վաստակել:

Ազերիների դեմ կատաղի մարտերում՝ Դրմբոն, Չլդրան, Պողոսագոմեր, Գյուլաթաղ, Չափար, Տոնաշեն, Կուսապատ, Կիչան գյուղերի ազատագրման համար մարտերում 3-րդ գումարտակի կազմում մարտնչում էր լեռնաշխարհի մյուս արիասիրտ աղջիկը՝ Ստալինա Արյանը:

1993թ. մարտի 20-ին գումարտակը հրաման ստացավ թուրք ելուզակներից մաքրել այդ գյուղերը: Ազատագրվեցին շրջանի շատ գյուղեր: Սակայն թշնամու դավադիր ակամից գումարտակը կորցրեց Ստալինա Արյանին՝ «պատերազմի աստվածուհի» անվանն արժանացած:

Չինվորական կանանց շարքերում մաքառում էին նաև դիպուկահար կանայք: Անվրեպ նշանառուի համբավ էր ձեռք բերել Մարտունու շրջանի Հացի գյուղում ծնված, մաքեմատիկական փայլուն գիտելիքներով օժտված Մարգարիտ Մարգարյանը: Նա կարճ ժամանակում տիրապետել էր հրաձգության գաղտնիքներին և մասնակցել Լաչինի մարդասիրական միջանցքի բացման համար կռիվներին:

1993թ. հունվարին թշնամին քիչ ուժեր չէր կուտակել և շտապում էր գրավել Լաչինի միջանցքը: Խիզախ և գործիմաց Մարգարիտն իր անվրեպ նշանառությամբ անընդհատ խուճապի էր մատնում զարմացած հակառակորդին՝ ստիպելով նրան առանց ետ նայելու փախուստի դիմել: Մարգարիտի անունը թնդում էր կռվի դաշտում: Նրան աննուրբ «հմուտ նշանառու» էին կոչում: Նա բազմիցս նայել է մահվան աչքերին, բայց երբեք չի կորցրել հավատը հաղթանակի նկատմամբ:

1993թ. օգոստոսի 23-ին դարանակալ թշնամու զնդակից 7 զինվոր-մարտիկների հետ

խրամատում մարեց Մարգարիտի կյանքը: Մինչդեռ զինվորների հիշողության մեջ մնացել էին Արցախի նվիրյալ դուստր Մարգարիտի խոսքերը. «Մեռնելն էլ ապրելու մի ձև է: Եթե զոհվեմ՝ գերեզմանիս շատ ծաղիկներ կդնեք»:

Կանանց ջոկատի մեկ այլ անդամ՝ Ճյմարիտ հայրենասեր զինվոր Մարգարիտ Թառանյանի գրառումներում հանդիպում ենք հետևյալ տողերին. «Գեղեցիկի ու ծաղկի պաշտամունք ուներ Մարգարիտը»:

Կանայք, հայրենիքի պաշտպան մարտիկների հետ վրիժառությանը լի, շարունակել են սխրանքներ գործել մեր մահատակների արյունով շաղախված արցախյան ամեն մի թիզ հողի համար:

Առայսօր Եվգենյա Առստանյանը, Կարինե Դանիելյանն իրենց մարմնում արկի բեկորներ են կրում: Դիպուկահար Կարինե Դանիելյանը դեռ չի ապաքինվել պատերազմի պատճառած վերքերից:

Այսօր Արցախի կանայք շարունակում են քաջությամբ տանել պատերազմի պատճառած ողբերգություններն ու վշտերը, պաշտպանել արյան գնով ձեռք բերված Արցախի ինքնիշխանությունը, նրա նվաճումներն ու աճողորը:

Արցախի հերոսամարտերի կրակների միջով անցած կանայք, որոնք ուխտել էին ազատության համար զենք մեծ գոհողությունների, իրենց սխրանքներով վեհացրել են մեր լեռնաշխարհի պատմությունը, սրբագործել պայքարից ժառանգություն ստացած հող հայրենին, որի պաշտպանությունը կմնա գերագույն նպատակ գալիք սերունդների համար:

Ռուս ԲԱԼԱՅԱՆ
«Գրիգոր Նարեկացի» համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՇԱՐԺՄԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ, ԱՉԱՏԱՄԱՐՏԻԿԸ



Վարդուհի ԳեՎՈՐԳՅԱՆ: Առաքինի, արիասիրտ, անձնվեր հայուհի, որի նմանների մասին է ասված՝ «Առյուծը առյուծ է...»: Ով, որպես պատգամավոր, մասնակցել է 1988-ի հայտնի նստաշրջանին, եղել ԼՂԻՄ մարզխորհրդի, Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների 1991թ. սեպտեմբերի 2-ի համատեղ նստաշրջանի քարտուղարը, ով սկզբից մինչև մարտնչել է Արցախյան պատերազմում: Նա համաձայնեց իր հիշողություններով կիսվել մեզ հետ, քանզի առիթ կլինի և մեկ անգամ հի-շատակելու սիրելի մարդկանց անուններ, մոռացումի փոշուց հանելու հետաքրքիր անցքեր ու իրադարձություններ: Թե ինչ ընթացք կունենար Վարդուհի (Վարդուհի) Գևորգյանի կյանքը, եթե 1981թ. Ստեփանակերտի հ. 2 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունելության քննություններում չձախողվեր, դժվար է ասել միայն առաջին փուլի մասով՝ մինչև Արցախյան գոյապայքարը, բայց դրանից հետո անպայման նույնը կլինի, ինչ եղավ:

խմորվում, դեռևս ստորագրություններ էին հավաքում Արցախը մայր Հայաստանին վերամիանալու պահանջով: Կոնդենսատորների գործարանն ընդհատակյա շարժման կենտրոններից էր: Գործում էր ակտիվիստների 15-հոգանոց խումբ, որը ղեկավարում էր ավագ ինժեներ-տեխնոլոգ Գեորգի Պետրոսյանը: Խմբի մեջ էր նաև Վարդուհի Գևորգյանը: Նա իր հերթափոխի ընդհատակյա ստորագրակառուցի կազմակերպիչն էր: Մյուս հերթափոխի ղեկավարը Կարեն Առաքելյանն էր, ում հետ մարտական երկար ճանապարհի պիտի անցներ Վարդուհին, և ում հուշերի գլխավոր առանցքն է մաքս ու անձնագրի, այսօր հուշարձան դարձած ընկեր: Ստորագրակառուցի հաջողությունը Ստեփանակերտում և շրջաններում սկսված բազմամարդ հանրահավաքները: Նախքան պատմական նստաշրջանը, կոնդենսատորների գործարանի մի խումբ աշխատողներ, որոնք թվում էին Վարդուհին, մեկնել էին Երևան՝ մասնակցելու այնտեղ նույնպես կազմակերպվող հանրահավաքներին: Կազմակերպիչը գործարանի տնօրեն Սերգեյ Աբրահամյանն էր: Երևանից նրանք վերադարձան ավելի ոգեպինդ ու վճռական դարձած: Իսկ Շարժման գազաթանկները փետրվարի 20-ն էր, երբ ժողովրդի պահանջով պատգամավորներն Ստեփանակերտում նստաշրջան հրավիրեցին: Այդ մասին Վարդուհին պատմում է հետևյալը. «Այդ օրը երբեք չեմ մոռանա: Առավոտյան ժամը 8-ին մտել էինք մարզխորհրդի գործկոմի շենքը, որպեսզի նստաշրջան անցկացնենք: Ժողովուրդը հրապարակում «սեսիա» էր վանկարկում: Նրանց ծայրը մեզ էր հասնում: Նստաշրջանն անցկացրինք, կայացվեց հայտնի որոշումը, սակայն մարզգործկոմի նախագահ Օսիպովը չկար, որպեսզի որոշումը վավերաց-

ներ կնիքով: Մինչև երեկո սպասեցին, չեկավ, փախել էր: Համաձայն կանոնակարգի՝ եթե մարզգործկոմի անդամների գերակշիռ մասը տվյալ որոշման տակ դնում է իր ստորագրությունը, ապա այն հավասարազոր է որոշման վավերացմանը կնիքով: Այդպես էլ արեցինք: Երբ շենքից դուրս եկանք, արդեն մութ էր, ժամը մոտ 9-ը: Մեր գործարանի բանվորները հարցրին՝ ի՞նչ դառավ, պատասխանեցի՝ վերջ, մենք մեր գործն արեցինք: Մինչև մեր տուն՝ «Կոլցոն», նրանք ինձ ձեռքերի վրա տարան: Ժողովուրդը փողոցում պարում էր, ամբողջ գիշեր քեֆ էինք անում»: Երբևիցե հուշերը չչարադրած, առավել և՛՝ գրառման համար, մեկի համար հեշտ չէր պահի տակ դրանք համակարգված ներկայացնելը, ինչը մեր խնդրանքով փորձում էր անել Վարդուհին: Պատմում էր ավելի շատ ընկերների, առանձնապես, Կարեն Առաքելյանի մասին՝ մատնանշելով նրանց սխրանքը: Հանրահավաքներին զուգահեռ՝ տարվում էին ինքնապաշտպանական աշխատանքներ: Վարդուհին արդեն թեժ գծում էր: Նա մերթ հայտնվում էր Երևանում, մերթ Չարենցավանում, մերթ Աբովյանում ու Հրազդանում՝ ընկեր-ժանոթների միջոցով տեղի գործարաններում զենքի մասեր հայթայթելու (այդ տարիներին նման նշանակության գործարաններ կային այնտեղ): «Շմայսեր» ավտոմատի մասեր, դրանց հավաքման սխեմաներ, ինքնաշեն փամփուռներ հավաքած՝ գաղտնի Ստեփանակերտ էր հասցնում: Օպանակավապանում կանանց դեռ այնքան խիստ չէին ստուգում օժանդակները: Երբ սահմանները գյուղերում, հատկապես Շահումյանում, հերթապահելու համար սկսեցին ստեղծվել պաշտպանական ջոկատներ, Վարդուհին առաջիններից մեկը ցուցակագրվեց: Մարտական առաջին դիրքը Փառուխում էր: Ձեռքի զենքը որսորդական կամ «ՏՕՁ» տեսակի հրացան էր: Հսկում էին, որ ազերիներ-

ը չմտնեն գյուղերը: Դավաճաններ էլ կային, և շուտով Վարդուհի Գևորգյանի ու Կարեն Առաքելյանի անունները հայտնի դարձան օժանդակներին: Կարենը բռնվեց՝ ինքնաշեն զենքը ձեռքին: Նրան տեղափոխեցին Աղդամ, սակայն մեկ շաբաթ անց Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկարի Վուլսու միջամտությամբ հաջողվեց ազատ արձակել: Որպեսզի Վարդուհին էլ օժանդակների ձեռքը չընկնի, ուղարկեցին Հրազդանում գործող ճամբար, որտեղ ժամանակավորապես տեղակայված էին արցախցի երեխաները: ...1991թ. Վարդուհին Փառուխից տեղափոխվում է Կիչան՝ Խաչենի պաշտպանական գումարտակ, որը Կարեն Առաքելյանն էր ստեղծել, ինչպես նա էր ասում՝ «ռուսի բանակի օրինակով»: Վարդուհու հետ այդ գյուղից մի աղջիկ էլ կար՝ Հասմիկ (Հաստ) անունով: Վերջինս հետագայում ամուսնացել է Կարենի եղբոր հետ, այժմ չորս երեխա ունի: Մի քանի անգամ շրջակա գյուղերը ձեռքից ձեռք են անցել: Հուշեր ունի՝ կապված Բեկորի՝ լեզբեղար Աշոտ Դուլյանի, Լեռնիկ Ազգալոյանի հետ. «Վերջինս սահմանած կարգուկանոն ուղղակի ապացուցեց էր: Ծխող չէր ու չէր թույլատրում մյուսներին ծխարան էր սարքել, կարգադրել այնտեղ ծխել ու մնացուկն էլ մոխրամանը զգել: Բայց ո՞վ էր զգվել թշնամու կրակի տակ սար բարձրանալ: Չէին ծխում, կամ էլ մոլի ծխողները դա անում էին նրանից ծածուկ: Համ կախեցնում էին, համ էլ խորապես հարգում Ազգալոյանին»: Վարդուհին մեծագույն հարգանքով է հիշում նաև Սերգեյ Սկրոչյանին (Քաչալ Սերգեյ), որը Հայաստանից օգնության էր եկել 90-հոգանոց ջոկատով, դիրքավորվել Մարտունու շրջանում. Սերգեյը 20 հոգով եկավ օգնության: «Մինչև օպերացիան սկսվելն ինձնից բինտմառայա խնդրեց: Ե՛հ չտոն ասած՝ ծանոթ չէի ու չգիտեի, որ վիրավոր է: Նույնիսկ կուպտեցի՝ կարծելով, թե ու-

հսկ նրա ճանապարհի սկիզբն ու շարունակությունն այսպիսին էին. 18-ամյա աղջիկն աշխատանքի անցավ Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանում: Կարճ ժամանակում աչքի ընկավ աշխատանքում: 1987-ին ընտրվեց ԼՂԻՄ մարզխորհրդի պատգամավոր: Այդ թվականին Արցախյան շարժումը նոր էր

